# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 25 (1475) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 10, 2010
VOLUME 30, NO. 25 (1475) SATURDAY, JULY 10, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## «ՄԵՆՔ ՅՈՅՍՈՎ ԵՆՔ ՏԵՍՆԵԼՈՒ ԻՐԱԿԱՆ ՅԱՌԱՋԸՆԹԱՑ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԱՄԲՈՂՋԱՑՆԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ»

### ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

### ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆ «ԱՆՁՆԱԿԱՆ» ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵՑ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Հիլըրի Քլինթըն Կիրակի, Յուլիս 4-ին աւարտելով Պաքու կատարած իր այցելութիւնը՝ ժամանեց Երեւան: «Զուարթնոց» օդանաւակայանէն ներս Քլինթընին դիմաւորեց Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան: Օդանաւակայանէն բարձրաստիճան հիւրը ուղղուեցաւ դէպի Նախագահական Նստավայր, ուր հանդիպում ունեցաւ Սերժ Սարգսեանի հետ:

«Հայաստանը խորապէս շահագրգռուած է ԱՄՆ-ի հետ իր յարաբերութիւնները ամրապնդելու հարցում»,- յայտարարած է Սարգսեան՝ ընդունելով Տիկին Քլինթընին:

Նախագահի մամլոյ գրասենեակի փոխանցմամբ՝ Հիլըրի Քլինթըն ըսած է, թէ իր համար մեծ պատիւ եւ հաճոյք է գտնուիլ Հայաստանի մէջ, եւ յատկապէս հաճելի է այսօր այստեղ գտնուիլ, երբ Միացեալ Նահանգները կը նշէ իր Անկախութեան տօնը. - «Վաղը նաեւ ձեր Սահմանադրութեան օրն է. եւս մէկ կապ ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ»,- ըսած է Քլինթըն:



Հիլըրի Քլինթըն Ծիծեռնակաբերդի յուշահամալիրէն ներս

Սարգսեան-Քլինթըն հանդիպումի աւարտին տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս, որու ընթացքին Պետական Քարտուղարը ըսաւ, որ Միացեալ Նահանգները խստօրէն կը դատապարտէ ուժի, ինչպէս նաեւ ուժի սպառնալիքի կիրա-

Շար.ը էջ 18

## ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՅԱՌԱՋԸՆԹԱՑ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԵՆ

ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի համանախագահներ Իկոր Փոփով (Ռուսաստան), Պեռնար Ֆասիէ (Ֆրանսա) եւ Ռոպերթ Փրատկէ (Միացեալ Նահանգներ) տարածաշրջան կատարած իրենց վերջին այցի ընթացքին յառաջընթաց արձանագրած են:

Հայաստանի, Ատրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանութիւններու հետ հանդիպումներու արդիւնքները միջնորդները ամփոփած են Յուլիս 5-ի երեկոյեան հրապարակուած յայտարարութեամբ:

Համաձայն փաստաթղթի՝ այցի շրջագիծէն ներս կայացած հանդիպումներու ժամանակ Մինսկի խումբի ամերիկացի, ռուսաստանցի եւ ֆրանսացի համանախագահները ընդգծած են իրենց «երեք երկիրներու պատրաստակամութիւնը՝ աջակցելու Ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման Հելսինքեան սկզբունքներու՝ ուժի չկիրառման կամ կիրառման սպառնալիքի բացառման, տարածքային ամբողջականութեան,

Շար.ը էջ 18

## ԳՈՆԿՐԵՍԻ ԵՆԹԱՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ. ՀԱՅԱՍՏԱՆԻՆ՝ 44 ՄԻԼԻՈՆ, ՂԱՐԱԲԱՂԻՆ՝ 10 ՄԻԼԻՈՆ

2011-ի ֆինանսական տարուան ընթացքին Հայաստանը Միացեալ Նահանգներէն պիտի ստանայ 44 միլիոն տոլարի ուղղակի օգնութիւն, եւ 10 միլիոն տոլար ամերիկեան պիւտճէէն պիտի յատկացուի Լեռնային Ղարաբաղին: Չորեքշաբթի երեկոյեան որոշումը առնուած է ԱՄՆ-ի Գոնկրեսի Ներկայացուցիչներու Տան արտաքին յատկացումներու ենթայանձնաժողովին կողմէ:

Աւելի առաջ Սպիտակ տունը առաջարկած էր Հայաստանին 40 միլիոն տոլարի օգնութիւն՝ 2010-ի 41 միլիոնի դիմաց:

Ենթայանձնաժողովի անդամները, սակայն, քննարկումներու ընթացքին որոշեցին Հայաստանին յատկացուող տնտեսական օգնութեան ծաւալը աւելցնել 10 տոկոսով:

Ինչ կը վերաբերի Լեռնային Ղարաբաղին, ապա ընթացիկ տնտեսական տարուան համեմատ՝ Ստեփանակերտին յատկացուող ամերիկեան ուղղակի օգնութեան ծաւալը աճելու է շուրջ 25 տոկոսով:

Ենթայանձնաժողովի անդամները նիստի ընթացքին անդրադարձած են նաեւ Յունիս 18-ին հայ - ատրպէյճանական շփման գօտիին

Շար.ը էջ 2

## ԹՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԻՋԱՄՏԱԾ ԵՆ ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

Յուլիս 1-ին Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդ ընտրուած է Արամ արք. Աթէշեան, որ աւելի քան մէկ տարիէ իվեր կը ղեկավարէր պատրիարքարանը:

Փոխանորդի ընտրութիւնը եղած է անակնկալ բոլորի համար: Պէտք էր ընտրուէր աթոռակից պատրիարք կամ նոր պատրիարք, ինչպէս որ կը պահանջէին հայ համայնքի տարբեր հատուածները: Այս երկու մօտեցումներու հետեւանքով Թրքահայ համայնքը պառակտուած էր երկու մասի:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին Պոլսոյ մէջ հրատարակուող «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գօչունեան ըսած է . - «Այդ պառակտուածութեան փոխարժէքը հիմա թանկ կը վճարէ համայնքը, որովհետեւ պետութիւնը արդէն չէր ալ ծրագրէր դիմումներէն որեւէ մէկուն ընթացք տալ, երկու կողմերուն ալ չբաւարարեց, առաջարկելով, որ պատրիարքի փոխանորդ ընտրուի»:

«Անպիսի վիճակ յառաջացաւ, որ հարցի լուծումը պետութիւնը ինքը թելադրեց», - ըսաւ Արա Գօչունեան, նշելով, որ կայ մէկ կարեւոր մանրամասնութիւն եւս. - «Թուրքիոյ Հանրապետութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, ընտրութիւն կատարելու համար համայնքի ներկայացուցած դիմումը մերժուած է»:



Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդ Արամ արք. Աթէշեան

Արա Գօչունեան դիտել տուաւ, որ անցեալին դէպքեր եղած են, երբ պատասխանը ուշ եկած է, բայց երբեք չէ մերժուած: «Իրավիճակը բարդ է: Բայց պետութեան առաջարկը արդէն իրականացուած է: Հինգշաբթի օր, կրօնական ժողովը նիստ գումարած է եւ որոշած է ընթացք տալ ստացուած պատասխանին: Նոյն օրը համայնքային խորհրդակցութիւն հրաւիրուած է, որպէսզի համայնքի ղեկավարներուն ու մամուլին տեղեկացուի կացութեան մասին: Կէսօրէն յետոյ եկեղեցական ժողովը միաձայնութեամբ Պոլսոյ Հայոց պատրիարքարանի փոխանորդ ընտրած է Արամ արք. Աթէշեանը»:

Արա Գօչունեանի համաձայն, բաւականին հարցականներ կան մասնաւորապէս պատրիարքի աթո-

Շար.ը էջ 18

# ՏՈԿՈՍԱՅԻՆ ՊԱՏՐԱՆՔՆԵՐ

***ՀԱՅԿ ԳԷՈՐԳԵԱՆ***

*Հայաստանի տնտեսութեան, այսպէս կոչուած՝ յետճգնաժամային վերականգնման մասին արդէն յայտարարուել է: Դա մեր իշխանական քարոզչամիջոցների՝ տնտեսութեանը վերաբերող ռեփորթաժների «կարմիր թելն է»:*

*Շատ լաւ է, որ տնտեսութիւնը վերականգնուել է: Եթէ իհարկէ վերականգնուել է: Եթէ իհարկէ մինչ այդ եղել է տնտեսութիւն, բառիս բուն իմաստով: Ազգային վիճակագրական ծառայութիւնը հրապարակել է այս տարուայ առաջին հինգ ամիսներին ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշները, եւ դրանք ուսումնասիրելով փորձենք պարզել, թէ մեր տնտեսութիւնը իրօ՞ք վերականգնուել է: Այս հարցի պատասխանը գտնելու համար աւանդաբար նայենք այն ճիւղերին, որոնց հաշուին ձեռք է բերուել մեր այս տարուայ առաջին 5 ամիսների 8.8 տոկոս տնտեսական աճը: Իշխանութիւնների «կանխոկը» արդիւնաբերութեան ոլորտի աճն է: Վիճակագիրների ներկայացմամբ այդ աճը իրօք տպաւորիչ է. 12 տոկոս՝ անցած տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ: Նոյնիսկ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսէս Երիցեանը վերջերս գոհունակութեամբ նշեց, թէ վերջին տարիներին առաջին անգամ արդիւնաբերութիւնում նման աճ է արձանագրւում: Եւ իրօք, եթէ նայում ենք տոկոսներով, ապա անցած՝ ճգնաժամային տարուայ առաջին 5 ամիսներին 2008 թուականի նոյն ժամանակահատուածի համեմատ՝ արդիւնաբերութեան ճիւղում արձանագրուել էր 11 տոկոս անկում, հիմա՝ 12 տոկոս աճ... Տպաւորութիւն կարող է ստեղծուել, որ արդիւնաբերութիւնը եկել ու անցել է մինչ ճգնաժամային մակարդակը: Բայց սա միայն տպաւորութիւն է՝ տոկոսների խաղ: Ընթերցողին թուաբանութեան խորխորատները չգցելու համար բերենք ընդամէնը մի քանի օրինակ՝ ցոյց տալով, թէ ինչպէս կարելի է տոկոսների աճերով իրական աճի պատրանք ստեղծել, որը սակայն իրականութեան հետ կապ չունի: Օրինակ կոնեակի արտադրութիւնը: Այստեղ արձանագրուել է շատ մեծ աճ անցած տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ՝ մօտ 46 տոկոս: Տպաւորիչ է, չէ՞: Բայց... 2009-ի առաջին հինգ ամիսներին՝ 2008-ի նոյն ժամանակահատուածի համեմատ, կոնեակի արտադրութիւնը նուազել էր մօտ 48 տոկոսով: Ուրեմն ի՞նչ ստացուեց՝ նուազել էր 48 տոկոսով, հիմա աճել է 46 տոկոսով, ու առաջին հայեացքից կոնեակի արտադրութեան ծաւալները գրեթէ վերականգնուել են եւ հաւասարուել են մինչ-ճգնաժամային մակարդակին: Բայց եթէ այս տոկոսները վերածում ենք հազար լիտրերի, բոլորովին ուրիշ պատկեր է ստացւում: Այս տարուայ առաջին 5 ամիսներին Հայաստանում արտադրուել է 4 միլիոն 611 հազար լիտր կոնեակ այն դէպքում, երբ 2008-ին արտադրուել էր 6 միլիոն 50 հազար լիտր: Այսինքն՝ 1,5 միլիոն լիտրով կամ 25 տոկոսով պակաս: Ու այսպէս գրեթէ բոլոր ապրանքների արտադրութեան դէպքում՝ տոկոսով հաշուած տնտեսութիւնը վերականգնուել ու մի բան էլ առաջ է գնացել նախաճգնաժամային մակարդակից, բայց երբ նայում ես ֆիզիկական ծաւալներով, պատկերը ճիշդ հակառակն է: Աւելի ակնառու օրինակ: Ասւում է, որ այս տարուայ առաջին հինգ ամիսներին արտահանման ծաւալն աճել է 64 տոկոսով: Աննախադէպ, չքնաղ մի ցուցանիշ: 2009-ի առաջին հինգ ամիսներին՝ 2008-ի նոյն ժամանակահատուածի համեմատ, արտահանումը նուազել էր 48 տոկոսով: Եւ ուրեմն, արտահանումը նուազել էր 48 տոկոսով յետոյ աճել է 64 տոկոսով, նշանակում է խփել անցել ենք նախաճգնաժամային ցուցանիշները: Իրականում, սակայն, 2008-ի առաջին հինգ ամիսներին արտահանման ծաւալը կազմել է 421 միլիոն տոլար, իսկ 2010-ին՝ 364 միլիոն տոլար, կամ 60 միլիոն դոլարով պակաս: Ասել, որ վիճակագիրներն այստեղ ինչ-որ մեքենայութիւններ են անում, այնքան էլ այդպէս չէ՝ տոկոսներով ներկայացնելիս թուաբանութիւնը ճիշդ է: Այլ հարց է, որ հանրութեանը միայն տոկոսային պատկերներ ներկայացնելով եւ խնամքով թաքցնելով արտադրութեան ֆիզիկական ծաւալների փոփոխութիւնները, փաստօրէն թիւր պատկեր է ստեղծւում տնտեսութեան իրական վիճակի մասին: Իսկ իրական վիճակը, կարելի է ասել, այնքան էլ չի տարբերւում ճգնաժամայինից: Ինչպէս արդիւնաբերութիւնում, այնպէս էլ արտահանման մէջ աճը հիմնականում, եթէ ոչ բացառապէս, պայմանաւորուած է հանքաքարերի արտադրութեան, մետաղի ջարդոնի եւ թանկարժէք մետաղների ու քարերի արտադրութեան, արտահանման ցուցանիշների եւ գների աճով, ինչը իրական տնտեսութեան հետ քիչ կապ ունի: Այսպէս, արտահանումը աճել է 143 միլիոն տոլարով, որից 134 միլիոն տոլարի աճը պայմանաւորուած է հենց այս ապրանքատեսակների արտահանման աճով, ինչն էլ մեծ մասամբ պայմանաւորուած է դրանց ոչ այնքան ֆիզիկական ծաւալների, այլ ընդամէնը գների աճով:*

*ԱՎԾ-ի հրապարակած այս տարուայ առաջին 5 ամիսների ցուցանիշների մէջ ամենամտահոգիչը, իհարկէ, Մայիս ամսուայ տուեալներն են: Ինչպէս արդէն նշուել է, տնտեսութեան գրեթէ բոլոր ճիւղերում Ապրիլի համեմատ՝ կտրուկ անկում է արձանագրուել: Բայց դրանց մասին մանրամասները յայտնի կը դառնան միայն մէկ ամիս անց:*

*«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»*

# ՎՏԱՆԳԱՒՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

***ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ***

*Հայաստանի Սահմանադրութիւնն այսօր (Յուլիս 5) դարձաւ 15 տարեկան: Երբ այն 10 տարեկան էր, ենթարկուեց «բլաստիկ վիրահատութեան» Սահմանադրութեան յօդուածների գերակշիռ մեծամասնութիւնը փոխուեց: Բայց թէ դրանից առաջ եւ թէ դրանից յետոյ, Հայաստանի քաղաքացիների համար Սահմանադրութիւնը չդարձաւ պաշտպանուածութեան երաշխաւորութեան զգացման հիմք: Փոխուած, թէ չփոխուած, Սահմանադրութիւնը Հայաստանի քաղաքացիների կեանքի որակի բարելաւման վրայ որեւէ էական ազդեցութիւն չունեցաւ:*

*Սահմանադրութեան դերի եւ նշանակութեան մասին շատերն են խօսում, նաեւ իշխանութիւնը, յատկապէս Սահմանադրութեան օրուայ առիթով, բայց առարկայական, գործնական առումով Սահմանադրութեան դերն ու նշանակութիւնը կեանքում շատ քիչ է նկատելի: Այդ փաստաթուղթը, իր կեանքի առաջին 15 տարիների ընթացքում, այդպէս էլ չդարձաւ քաղաքացիական համակեցութեան միասնական քոտեքս, որի շուրջ ընդհանուր յայտարարի են գալիս հասարակական-քաղաքական բոլոր շերտերը, դրա միջոցով գծելով խաղի ընդհանուր մի կանոն:*

*Հայաստանում շատ է խօսուել, խօսւում, դեռ կը խօսուի, որ պէտք է ազգային համաձայնութիւն, ազգային միասնութիւն, համախմբուածութիւն: Սահմանադրութիւնն այն հարթակն է, որը պէտք է լինէր այդ համաձայնութեան, միասնութեան, համախմբուածութեան առանցքը, արտայայտիչը. Համաձայնութիւն՝ խաղի ընդհանուր կանոնների շուրջ, ինչը պէտք է արդիւնաւէտ եւ հանրօգուտ դարձնէր տարբեր արժէքների, գաղափարների, նպատակների շուրջ ներազգային մրցակցութիւնը, դրանով նպաստելով հասարակական եւ պետական որակների զարգացմանը:*

*Բայց, 1995 թուականի քաղաքական «վերնախաւը» իր Սահմանադրութիւնը պարտադրեց քաղաքացիներին, իսկ 2005 թուականի «վերնախաւն» էլ քաղաքացիներին պարտադրեց Սահմանադրութեան իր փոփոխութիւնը: Ու որեւէ «վերնախաւ» չփորձեց նախ եւ առաջ ձեւաւորել հասարակական-քաղաքական միջավայրի սահմանադրապաշտ գիտակցութիւն, ինչի բացակայութեան դէպքում Սահմանադրութեան գոյութիւնը ոչ միայն անիմաստ է դառնում, ոչ միայն աւելորդ, այլ նաեւ վտանգաւոր, որովհետեւ այդ պայմաններում Սահմանադրութեան գոյութեան ամէն մի օրն արժեզրկում է պետական կեանքի կազմակերպման այդ լուրջ գաղափարը:*

*Եթէ ամէն ժամանակի «վերնախաւ» պէտք է Սահմանադրութիւնը ծառայեցնէր իր քաղաքական շահին, ապա շատ աւելի լաւ կը լինէր, որ Հայաստանը մինչեւ հիմա չունենար Սահմանադրութիւն: Գոնէ Սահմանադրութեան գաղափարը չէր լինի մէկն այն մնացեալ լուրջ գաղափարներից, որ Հայաստանի անկախութեան 20 տարիների ընթացքում վարկաբեկուեցին մինչեւ ուղն ու ծուծը: Ի վերջոյ, եթէ Սահմանադրութիւնն առաւելապէս ծառայելու է ոչ թէ քաղաքացիական, այլ քաղաքական նպատակների սպասարկմանը, ապա ո՞րն է դրա գոյութեան իմաստը. արդեօ՞ք լրացուցիչ ոչ աշխատանքային օրը: Թէեւ իհարկէ երեւանեան շոգի պայմաններում դա էլ քիչ չէ:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# ԳՈՆԿՐԵՍԻ ԵՆԹԱՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ. ՀԱՅԱՍՏԱՆԻՆ՝ 44 ՄԻԼԻՈՆ, ՂԱՐԱԲԱՂԻՆ՝ 10 ՄԻԼԻՈՆ

***Շարունակուած էջ 1-էն***

*տեղի ունեցած միջադէպին՝ ընդգծելով. - «Անհրաժեշտ է խորհրդակցութիւններ կատարել Սպիտակ տան վարչակազմի հետ՝ նուիրուած Ազատութեան աջակցութեան յետագայ ճակատագրին»:*

*90-ականներու սկզբին ընդունուած այս լրացման համաձայն՝ Ատրպէյճանին ուղղակի ամերիկեան օգնութեան յատկացման համար պայման էր սահմանուած Հայաստանի շրջափակման վերացումը: 2002 թուականին, սակայն, Գոնկրեսը Միացեալ Նահանգներու նախագահին հնարաւորութիւն ընձեռեց սառեցնել 907-րդ ցուցմունքի գործողութիւնը:*

*Ինչ կը վերաբերի Հայաստանին եւ Ատրպէյճանին ռազմական ոլորտի մէջ յատկացուող ամերիկեան օգնութեան ծաւալներուն, ապա եկող տարի ալ անոնց ծաւալները հաւասար մակարդակի վրայ պահելով յանձնաժողովը որոշած է Հայաստանին ու Ատրպէյճանին 3.5-ական միլիոն տոլարի օգնութիւն տրամադրել արտաքին ռազմական օժանդակութեան ծրագրի շրջանակներուն մէջ, ինչպէս նաեւ 450-հազարական տոլար՝ ռազմական վարժանքներու եւ կրթական ծրագրերու նպատակով:*

*Ենթայանձնաժողովի որոշման մէջ առանձին յիշատակմամբ նաեւ կոչ ուղղուած է Ատրպէյճանի ղեկավարութեանը՝ վերջ տալ ռազմատենչ հռետորաբանութեան օգտագործմանը:*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

***ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ***

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱԿ-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՔԹԻՒԻՍՏԸ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՈՒԵԼ

*Ուրբաթ Յուլիս 2-ին «Նուպարաշէն» քրէակատարողական հիմնարկից ազատ է արձակուել Հայ Ազգային Կոնկրեսի 19-ամեայ աքտիւիստ Դաւիթ Քիրամիջեանը:*

*Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանը՝ դատաւոր Մնացական Մարտիրոսեանի նախագահութեամբ, որոշել է անյապաղ կալանքից ազատ արձակել Քիրամիջեանին եւ նրա նկատմամբ որպէս խափանման միջոց ընտրել բնակավայրից չհեռանալու մասին ստորագրութիւնը:*



ՀԱԿ-ի ակտիւիստ Դաւիթ Քիրամիջեան

*Քիրամիջեանը անազատութեան մէջ էր Մայիսի 31-ից, նրան մեղադրանք է առաջադրուել Քրէական օրէնսգրքի 258-րդ յօդուածի երրորդ մասի առաջին կէտով՝ «խուլիգանութիւն, որը կատարուել է մի խումբ անձանց կամ կազմակերպուած խմբի կողմից»: Յունիսի 3-ին նոյն՝ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը նրա նկատմամբ խափանման միջոց էր ընտրել կալանքը՝ երկու ամիս ժամկէտով:*

*Դաւիթ Քիրամիջեանին առաջադրուած մեղադրանքը, սակայն, չի վերացել: Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատարանի դատաւոր Մնացական Մարտիրոսեանի որոշմամբ Դաւիթ Քիրամիջեանի եւ Սարգիս Գէորգեանի գործով դատաքննութիւնը նշանակուել է Յուլիսի 14-ին:*

*Քիրամիջեանը կալանավայրից հեռանալուց յետոյ առաջին այցելութեան վայր ընտրեց Հայ Ազգային Կոնկրեսի գրասենեակը, որտեղ նրան դիմաւորեցին ընկերները եւ Կոնկրեսի աւագ ներկայացուցիչները:*

*«Ազատութիւն» ռատիօկայանի հետ զրոյցում Դաւիթն ասաց, որ դատարանի որոշումը անսպասելի էր իր համար: Որոշումն անսպասելի էր նաեւ ընդդիմադիր երիտասարդի հօր՝ Հայկազ Քիրամիջեանի համար, ով իր որդու նկատմամբ խափանման միջոցը փոխելը բացատրեց «ներքին եւ արտաքին ճնշումներով»:*

# ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵԹԵՐԱՆՆԵՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՐՀԱԶՕՐ ՍՏԵՂԾԵԼ



Ղարաբաղեան պատերազմի Վեթերանները Հայաստանի Նախագահի Նստավայրի դիմաց ցոյցի պահուն

*Ղարաբաղեան պատերազմի վեթերանների Միութեան մի քանի տասնեակ անդամներ, միութեան երիտասարդական թեւի ներկայացուցիչներ Յուլիս 3-ին Հայաստանի նախագահի նստավայրի դիմաց ակցիա էին կազմակերպել՝ աշխարհազօրի ստեղծման եւ ոչ մի թիզ հող Ատրպէյճանին չզիջելու պահանջով:*

*«Եկել ենք, որ ստեղծուի աշխարհազօր: Եկել ենք, որ ոչ մի թիզ հող չյանձնուի, ու մեր ընկերների թափած արիւնը զուր չլինի», - ասաց ցոյցի կազմակերպիչներից մէկը:*

*Ղարաբաղեան պատերազմի վեթերանները վերջին իրադարձութիւններից յետոյ պատերազմի վերսկսման հաւանականութիւնը մեծ են համարում:*

*«Մենք պահանջում ենք, որ ստեղծուի աշխարհազօր, ամբողջ ազգը միաւորուի պաշտպանութեան գաղափարի շուրջ, ստեղծուեն համապատասխան կառոյցներ, ազգի պաշտպանողականութիւնը բարձր լինի, որ հակառակորդը գայթակղութիւններ չունենայ», - յայտարարեց Ղարաբաղեան պատերազմի վեթերանների Միութեան նախագահ, Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերի առաջին զօրահրամանատար Արքատի Կարապետեանը՝Ազօն:*

*«Մենք կարող ենք օրինակ ծառայել, հիմք հանդիսանալ», - «Ազատութիւն» ռատիօկայանին ասաց Կարապետեանը՝ շարունակելով. - «Մենք ընկերներ ունենք կորցրած, մարդիկ զոհուեցին, իրենց արիւնը թափեցին այս գործի համար: Մենք թոյլ չպիտի տանք, որ նոյնիսկ մի թիզ հող յանձնուի»:*

*Ի պատասխան դիտարկմանը, թէ Հայաստանի Հանրապետութիւնն ունի բանակ, ուժային այլ կառոյցներ, որոնց գործառոյթը երկրի անվտանգութիւնն ապահովելն է, եւ այդ պարագայում ո՞րն է աշխարհազօր ստեղծելու անհրաժեշտութիւնը՝ Արքատի Կարապետեանն արձագանգեց. - «Մենք ժողովրդով յաղթեցինք, ոչ միայն բանակով: Բանակն ունի իր տեղը, իսկ պատրաստ պիտի լինի, պիտի պաշտպանի ամբողջ ժողովուրդը: Բանակին վստահում ենք, բայց մենք հեծանիւ չենք յօրինում, նման կառոյցներ արդիւնաւէտօրէն գործում են մի շարք եւրոպական երկրներում»:*

*2009 թուականի Դեկտեմբերին ստեղծուած Ղարաբաղեան պատերազմի վեթերանների Միութիւնը, որ այս պահի դրութեամբ ունի շուրջ 1000 անդամ, այդ թւում՝ մի քանի կին ազատամարտիկներ, Հայաստանի նախագահի նստավայրի առջեւ նմանատիպ բողոքի ակցիա էր կազմակերպել նաեւ Յունիսի 21-ին՝ հանդիպում պահանջելով Սերժ Սարգսեանի հետ, ով այդ օրերին պաշտօնական այցով գտնւում էր Գերմանիայում:*

# ԸՍՏ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ

*Սահմանադրական դատարանի անդամ, փրոֆեսոր Ֆելիքս Թոխեանը համարում է, որ Հայաստանում պէտք է իրականացնել նոր սահմանադրական բարեփոխումներ: Յուլիս 5-ին ՀՀ Սահմանադրութեան ընդունման օրը, լրագրողների հետ հանդիպման ժամանակ բանախօսը ընդգծեց, որ թէեւ որպէս իրաւաբան գիտակցում է սահմանադրութեան կայուն լինելը, սակայն գտնում է, որ Հայաստանում այդ առումով պէտք է արուեն որոշակի քայլեր:*

*«Այսօրուայ Սահմանադրութիւնը ուղղակի անմիջական չի գործում, իսկ դրա հռչակուած նպատակները՝ ազատութիւն, արդարութիւն, մարդկային արժանապատուութիւն, ընտանիքի, հայրենիքի պաշտպանութիւն հարկ եղածին պէս չեն գնահատւում եւ կենսական ուժ չունեն առօրեայ կեանքում»,-ասաց նա:*

*Բարեփոխումների անհրաժեշտութիւն նա տեսնում է գրեթէ ամենուր՝ Նախագահ-Խորհրդարան, Նախագահ-Կառավարութիւն յարաբերութիւններում, նաեւ ՏԻՄ համակարգում: Բանախօսը անընդունելի համարեց նաեւ Երեւանի քաղաքապետի՝ աւագանու կողմից ընտրուելու գործառոյթը:*

*Ֆելիքս Թոխեանը 1995 թուականին եղել է ՀՀ առաջին Սահմանադրական յանձնաժողովի փորձագէտ, իսկ 2005 թուականին՝ արդէն յանձնաժողովի անդամ:*

*Ֆելիքս Թոխեանը յիշեցրեց, որ դրանք ընդունուել են անհանդուրժողականութեան մթնոլորտում, երբ բացակայում էր քաղաքական հիմնական ուժերի համաձայնութիւնը:*

*Այնուհանդերձ, նա ժողովրդավարութեան զարգացման տեսակէտից 2005 թուականի սահմանադրական բարեփոխումները համարեց մէկ քայլ առաջ:*



Սահմանադրական դատարանի անդամ, Ֆելիքս Թոխեան

*Որպէսզի սահմանադրական դրոյթները կիրառուեն, ՍԴ ներկայացուցիչը առաջարկեց մի քանի մօտեցում մրցունակ պետութեան ստեղծում, համապատասխան մեխանիզմների մշակում ու նաեւ սահմանադրական արժէքների պարզաբանում դեռ դպրոցական տարիներից:*

*Բացի այդ, Ֆելիքս Թոխեանը մատնանշեց մի քանի բացթողումներ, որոնք անմիջականօրէն առնչւում են Սահմանադրական դատարանին:*

*«Այն այսօր լիազօրուած չէ դատական ակտերի ատեանների սահմանադրականութեան վերահսկողութեան ոլորտում, կիսատ է մնացել դրա սահմանադրական կարգավիճակը: Լուրջ խնդիրներ կան նաեւ անհատական սահմանադրական բողոքի ինստիտուտի հետ»,-նշեց նա եւ յաւելեց, որ բացակայում է նաեւ անաչառ, անկախ եւ իրաւասու դատական համակարգը:*

*Ֆելիքս Թոխեանի գնահատմամբ, այսօր Սահմանադրութեան մէջ ամենից շատ խախտւում է մարդու իրաւունքների վերաբերեալ յօդուածը: Դա, սակայն, ըստ նրա, արւում է այն պատճառով, որ մեր հասարակութիւնը անշարժ է եւ չգիտի իր իրաւունքները, կամ չի հաւատում համակարգին: Այս համաթեքսթում նա պայքարելու խորհուրդ տուեց:*

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՕՍՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄՏԱՀՈԳԻՉ Է

*Ներկայացնելով յուլիսի 7-ին «Խօսքի ազատութեան իրաւունքը Հայաստանի Հանրապետութիւնում» իր արտահերթ հրապարակային զեկոյցը, ՀՀ Մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեանը յայտարարեց, որ այդ ոլորտում իրավիճակը մտահոգիչ է, առկայ են բազմաթիւ խնդիրներ եւ բարեփոխումների ընթացքը պէտք է արագացնել:*

*Խօսքի ազատութեան սահմանափակումների դրսեւորումները տարբեր են՝ ուղղակի բռնութիւն կամ բռնութիւն գործադրելու սպառնալիքներ, թերթերին ծառայութիւններ մատուցող ընկերութիւնների կողմից թերթերի համար արհեստական խոչընդոտների ստեղծումը, թերթի ամբողջ տպաքանակը կրպակներից գնելը: Ա. Յարութիւնեանը նշեց նաեւ, որ լրագրողները ենթարկվում են բռնութեան իրենց մասնագիտական պարտականութիւնների կատարման համար, իսկ մեղաւորները, որպէս կանոն, դրա համար պատասխանատուութեան չեն ենթարկվում: Բազմաթիւ լրատվամիջոցների կարծիքով, 2008թ.-ի մարտի 1-20-ին երկրում գործող արտակարգ իրավիճակի պայմաններում ԶԼՄ-ները ուղղակի ենթարկվեցին օրէնքով արգելուած գրաքննութեան:*

*Պաշտպանը նշում է, որ լրագրողների գործունէութեան ազատութեան սահմանափակումները շատ դէպքերում ունեն քաղաքական ենթատեքստ*

## ԼՈՒՐԵՐ

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՔԼԻՆԹԸՆԻՆ ԽՈՍՏԱՑԵԼ Է ՎԵՐԱՆԱՅԵԼ «ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԷՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Յուլիս 5-ին Հայաստանի հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ հանդիպմանը ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլըրի Քլինթընը յայտարարեց, թէ Նախագահ Սերժ Սարգսեանի հետ նախորդ օրն ունեցած զրոյցի ժամանակ իր մտահոգութիւնն է յայտնել Հայաստանում մամուլի ազատութեան հետ կապուած հարցերի առնչութեամբ:*

*«Ձեզանից շատերը մտահոգուած են հեռահաղորդակցութեան թուայնացմանն առնչուող վերջին օրէնսդրական փոփոխութիւնների կապակցութեամբ. Մենք, ինչպէս եւ ԵԱՀԿ-ն ու Եւրամիութիւնը, կիսում ենք այդ մտահոգութիւնը», - դիմելով հանդիպման մասնակիցներին՝ ասաց ԱՄՆ-ի պետքարտուղարը՝ յաւելելով, թէ Նախագահ Սարգսեանն իրեն պատասխանել է, որ Հայաստանի կառավարութիւնը պատրաստ է առաջիկայ աշնանը եւս մէկ անգամ վերանայել յիշեալ օրէնքը:*

*Հիլըրի Քլինթընը, ով երկօրեայ այցով Հայաստան է ժամանել Կիրակի օրը, Հայաստանի քաղաքացիական հասարակութեան առաջնորդների, իրաւապաշտպանների եւ լրագրողների հետ հանդիպմանը գովաբանեց նրանց ջանքերը՝ միտուած ժողովրդավարական արժէքների, այդ թւում՝ «հաշուետու կառավարման, ազատ եւ անկախ մամուլի, մարդու իրաւունքների հանդէպ յարգանքի» խթանմանը: Նշելով, որ ժողովրդավարական բոլոր երկրներում ժողովրդավարական արժէքները նուաճուել ու հաստատուել են երկարատեւ ու քրտնաջան պայքարի արդիւնքում, պետքարտուղարը յայտարարեց, թէ ինքն այսօր այստեղ է գտնւում, որպէսզի քաջալերի «շարունակել այդ նպատակներին ուղղուած ջանադիր աշխատանքը»:*

*«Միացեալ Նահանգները, Նախագահ Պարաք Օպամայի վարչակազմը եւ ամերիկեան ժողովուրդը կանգնած են ձեր կողքին՝ սատարելու այն ապագայի կերտման ճանապարհին, որին արժանի է ամէն մի հայ», - շարունակելով իր ելոյթը՝ ասաց նա:*

*Հիլըրի Քլինթընը յատուկ ընդգծեց, որ ժողովրդավարութիւնը միայն ընտրութիւններով չէ, որ դրսեւորւում է: Այն պահանջում է նաեւ «ազատ երկխօսութեան, գաղափարների անարգել փոխանակման հնարաւորութիւն, թափանցիկ եւ հաշուետու կառավարում, եւ, իհարկէ, ամենից առաջ՝ զօրեղ քաղաքացիական ուժ, որը միշտ պայքարում է երկիրը աւելի ազատ, աւելի արդար եւ աւելի առողջ դարձնելու համար է:*



**ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլըրի Քլինթընի հանդիպումը Հայաստանի հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչների հետ**

*Վստահեցնելով, որ Միացեալ Նահանգների կառավարութիւնը պատրաստ է այս հարցերում համագործակցել Հայաստանի հետ՝ պետքարտուղարը յատկապէս կարեւորեց լրագրողների համար աւելի «խորը պաշտպանութիւն» ապահովելու խնդիրը, քանի որ «միայն այդ դէպքում Հայաստանի ժողովուրդը կը կարողանայ ստանալ այն տեղեկատուութիւնը, որն անհրաժեշտ է առաւել ապահով ապագայ կառուցելու համար է:*

*Եզրափակելով իր խօսքը՝ Հիլըրի Քլինթընը յայտարարեց, թէ այն մարտահրաւէրները, որոնց առջեւ այսօր կանգնած է Հայաստանը, «աւելի մեծ չեն, քան արդէն իսկ յաղթահարուածները»:*

*Հանդիպման աւարտին Հարաւային Կովկասի իրաւապաշտպան ցանցի հայաստանեան անդամ-կազմակերպութիւնների ներկայացուցիչները դիմում են յանձնել ԱՄՆ-ի պետքարտուղարին, որում նրա ուշադրութիւնն են հրաւիրում Հայաստանում տիրող ներքին իրավիճակի վրայ:*

*«Պակաս կարեւոր չէ ներքին իրավիճակը, որը, ինչպէս գիտէք, լարուած է 2008-ի նախագահական կեղծուած ընտրութիւններից ի վեր», - գրում են նամակի հեղինակները՝ թուարկելով այն խնդիրներ, որոնց լուծումը համարում են «քաղաքացիական համերաշխութեան հաստատման նախապայման՝ «քաղբանտարկեալների ազատ արձակում», «մարտի 1-ի սպանութիւնների արդար հետաքննութիւն», «Ա1+ հեռուստաընկերութեան գծով Մարդու իրաւունքների եւրոպական դատարանի վճռի կատարում» եւ այլն:*

*«Ակնկալում ենք, որ Միացեալ Նահանգները իր հնարաւորութիւնների շրջանակներում, գործածելով իր լծակները, ազդելով Հայաստանի իշխող վարչակազմի վրայ, կ'օգնի Հայաստանի քաղաքացիական հասարակութեանն ու հանրութեանը լուծել վերոյիշեալ խնդիրները», - եզրափակում են նամակի հեղինակները:*

*Միացեալ Նահանգների պետքարտուղարն իր ելոյթում չանդրադարձաւ 2008 թուականի մարտի 1-ի իրադարձութիւնների հետեւանքով անազատութեան մէջ յայտնուած անձանց խնդրին:*

# ԹՈՒՐՔԱՀԱՅ ԼՐԱԳՐՈՂԻ ԿԱՐԾԻՔՈՎ ՔԼԻՆԹԸՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՃՆՇՈՒՄ ԷՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎՐԱՅ

*Թուրքական քաղաքական շրջանակներն առայժմ չեն արձագանքել ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթընի Յունիսի 4-ին արած այն յայտարարութեանը, թէ հայ-թուրքական յարաբերութիւններում գնդակը գտնւում է Թուրքիայի դաշտում: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարել է Թուրքիայում հրատարակուող «Ակօս» թերթի խմբագիր Արիս Նալչըն:*

*«Լուրը տուել են, բայց պետական առումով արձագանքներ չկան»,- նշեց հայազգի լրագրողը համոզմունք յայտնելով, որ հաւանաբար այս գիշեր արդէն որոշ մեկնաբանութիւններ կը լինեն ԱՄՆ պետքարտուղարի յայտարարութեան վերաբերեալ:*

*Արիս Նալչըն նաեւ կիսում է պետքարտուղարի այն կարծիքը, թէ գնդակն այժմ գտնւում է Թուրքիայի դաշտում: «Հայաստանն իր բոլոր քայլերը կատարել է, եւ այժմ սպասում է Թուրքիային պատասխան քայլին»,- նշեց «Ակօսի» խմբագիրը:*

*Ըստ Նալչըի՝ Հիլարի Քլինթընի յայտարարութիւնը որոշակի ճնշում է Թուրքիայի վրայ: «Հարկաւ որոշակի ճնշում է: Քանի որ ԱՄՆ-ի արտգործնախարարութեան կողմից նման յայտարարութիւն է եղել, բայց այժմ Թուրքիային այլ հարցեր են յուզում, քան հայ-թուրքական յարաբերութիւնները, եւ հաւանաբար դա է պատճառը, որ անմիջապէս պաշտօնական մակարդակով չարձագանքեցին Հիլարի Քլինթընի յայտարարութեանը:*

# ԱԺ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆ. ԱՄՆ-Ն ՅՈՒՅՍԸ ԿԱՊՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ

*ԱԺ պատգամավոր, ՍԴՀԿ Հայաստանի վարչության անդամ Վարդան Խաչատրյանը, Յուլիս 7-ին կայացած ասուլիսի ժամանակ մեկնաբանելով ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի տարածաշրջան կատարած այցը՝ ասել է, որ Քլինթոնի այցը Հայաստան իրենից ներկայացնում էր զուտ խորհրդանշական ուղեւորություն: Ըստ Վարդան Խաչատրյանի, դրա նպատակն էր ցույց տալ, որ սխալ են այն կարծիքները, թե ԱՄՆ-ն հետաքրքրություններ չունի Հարավային Կովկասում. «Հիլարի Քլինթոնը փորձեց ապացուցել, թե գլոբալ մակարդակի վրա չեն ԱՄՆ-ի հետաքրքրությունները մեր տարածաշրջանում, եւ իր այցը խորը ենթատեքստ ունի»:*



*Թուրք-իսրայելական հիմնախնդրի շրջանակներում ԱՄՆ-ն փորձում է իրականություն դարձնել «Միավորված Հարավային Կովկասի» գաղափարը եւ այդ ճանապարհին իր հույսը կապում է Հայաստանի հետ, հայտնեց ԱԺ պատգամավորը՝ անդրադառնալով Քլինթոնի այն հայտարարությանը, թե «ժողովրդավարական եւ բարգավաճ Հայաստանը կարող է մեծ ուժ դառնալ տարածաշրջանում» եւ Վաշինգտոնը կօգնի դրան հասնելունե:*

*«Այս պարագայում ադրբեջանական եւ թուրքական տարածված մոտեցումներից մեկը, թե Հարավային Կովկասը վերահսկելու համար կարեւոր է, թե ով ինչ աշխարհաքաղաքական դերք է գրավում տարածաշրջանում, արդեն սկսել է փոփոխության ենթարկվել եւ իրականության չհամապատասխանել»- նկատեց նա: Ըստ բանախոսի՝ Միացյալ Նահանգներում շատերն արդեն հասկացել են, որ տարածաշրջանում միակ հենարանը կարող է լինել ոչ թե Ադրբեջանը կամ Վրաստանը, այլ՝ Հայաստանը:*

# ԹՈՒՐՔ ԳԵՆԵՐԱԼՆ «ԷՐԳԵՆԵՔՈՆԻ» ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐԻՆ «ՀԵՐՈՍ» Է ԱՆՈՒԱՆՈՒՄ

*Թրքական «Ազգայնական Շարժում» կուսակցութիւնից պատգամաւոր, Թուրքիայի զինուած ուժերի պահեստի գեներալ-լեյտենանտ Էրտալ Սիփահին էրկենեքոնականներին «հերո-սացնելիս» չի մոռացել յիշել նաեւ հայերին: Թուրք շովինիստը նշել է, որ «Թուրքիայում մոռացել են այն հերոսներին, ովքեր հարցաքննւում են»: Թրքական Radikal-ի փոխանցմամբ՝ ազգայնականութիւն շնչող թուրք գեներալը «իսկական հերոսներ» ասելով ի նկատի է ունեցել «Էրկենեքոն» ահաբեկչական կազմակերպութեան տխրահռչակ եւ հայատեաց անդամներին: «Հերոս» ազգի «աւելի հերոս» զաւակը նշել է, որ «իսկական հերոսներն» այժմ փտում են բանտում:*

*«Ազգայնական Շարժում» կուսակցութիւնը (Milliyeti Hareket Partisi կամ MHP) ազգայնական հայեացքներով աջաթեւեան կուսակցութիւն է: Հանդիսանում է Թուրքիայի երեք խոշորագոյն կուսակցութիւններից մէկը: Հիմնադրուել է 1969 թուականին Ալփարսլան Թիւրքեշի կողմից: 1997 թուականից կուսակցութեան նախագահն է Տեւլեթ Պահչելին: Թուրքիայի խորհրդարանում ունի 71 պատգամաւորական մանդատ:*

# ԵՐԵՒԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱՅ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎ



*Երեւանում՝ Գիտութիւնների ազգային ակադեմիայում Ուրբաթ օրը բացուեց «Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելից. արդարութեան հաստատման սահմանագիծ» խորագրով համաժողով: Համաշխարհային հայկական կոնկրէսի, Հայաստանի սփիւռքի նախարարութեան եւ Գիտութիւնների ազգային ակադեմիայի կազմակերպած համաժողովին մասնակցում էին գիտնականներ, քաղաքական գործիչներ ու պատգամաւորներ, հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ:*

*Բացելով համաժողովը՝ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսեանը, բարձր գնահատելով նախկինում Ցեղասպանութեան միջազգային ճանաչմանն ուղղուած միջոցառումները, շեշտեց, որ այս նախաձեռնութեամբ հիմք է դրւում այն համապարփակ ծրագրի մշակմանը, որը պիտի իրականացուի յառաջիկայ 5 տարիների ընթացում. - «Հարիւրամեակը մեզնից պահանջում է նոր մօտեցումներ»:*

*Ըստ համաժողովի բանախօսների, առաջիկայում իրականացուելիք միջոցառումները պէտք է նախ եւ առաջ ուղղուած լինեն Հայոց Ցեղասպանութեան ճանաչման, դատապարտման եւ հետեւանքների յաղթահարման առաւել ակտիւ աշխատանքների իրականացմանը, որոնց շնորհիւ անգամ հնարաւորութիւն պիտի ստեղծուի միջազգային դատական ատեաններ դիմել եւ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը եւ դատապարտումը կարգաւորել հենց այդ միջազգային դատական ատեանների վճռով:*

*Լիբանանի խորհրդարանի պատգամաւոր Ղասան Մուխայպէրը իր խօսքում հենց սկզբից ասաց. - «Ես հայ չեմ, ես լիբանանցի եմ, բայց ես ողջ մարդկութեան, այս մեծ ընտանիքի անդամ եմ եւ պատասխանատւութիւն եմ զգում այն ամէնի համար, ինչ տեղի է ունեցել նախորդ դարասկզբին Օսմանեան կայսրութիւնում հայ ժողովրդի հետ: Պէտք է դատապարտել այդ ոճիրը, որպէսզի ապագայում կանխուեն մարդկութեան հանդէպ նմանատիպ ոճիրները»:*

*«Մշտապէս քննարկւում են հետեւեալ հարցերը՝ արդեօ՞ք Թուրքիան ընդունում է այս ցեղասպանութիւնը, արդեօ՞ք ներողութիւն է խնդրում հայ ժողովրդից: Թէ՞ ժխտում է այն: Ես իրաւաբան եմ, Լիբանանի Խորհրդարանի Մարդու Իրաւունքների Պաշտպանութեան Յանձնաժողովի անդամ եւ համոզուած եմ, որ ժամանակակից Թուրքիան, որ իրաւայաջորդն է Օսմանեան կայսրութեան, չի կարող խուսափել եւ պէտք է պատասխանատւութիւն կրի Հայոց ցեղասպանութեան համար միջազգային քրէական դատարանում», - յայտարարեց Մուխայպէրը:*

*Ամերիկահայ անուանի պատմաբան Ռիչարդ Յովհաննիսեանը իր ելոյթում ասաց, որ մինչեւ հիմա շեշտը դրուել է Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման վրայ, բայց պահանջատիրութեան, հատուցման մասին չի խօսւում:*

*«Եթէ ճանաչմանը պիտի հատուցում հետեւի, արդեօ՞ք մենք պէտք է հատուցման ծրագիր մշակենք, թէ՞ սպասենք, որ թրքական կառավարութիւնը ճանաչի (Ցեղասպանութիւնը), նոր մտածենք հատուցման մասին», - ասաց նա:*

*Յովհաննիսեանի խօսքով, Թուրքիայում 2015-ին ընդառաջ արդէն իսկ որոշակի ծրագրեր են իրականացւում. - «Շահին անունով մի պատմաբան՝ թրքական պատմաբանների միութեան անդամ, արդէն 20 հատորանոց հրատարակութիւն է նախաձեռնել «հայկական բրոպլեմի» մասին: Ուզում են յաջորդ երկու տարիներին այս քսան հատորները հրատարակել՝ կանխելու համար հայերի գործունէութիւնը»:*




# «ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԱԾ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԻ ՓԱԿՈՒՄԸ

*«Լրագրողներ առանց սահմանների» (Reporters without borders) իրաւապաշտպան կազմակերպութիւնը դատապարտել է Թուրքիայի հեռուստատեսութեան եւ ռատիոյի վերահսկողութեան կառոյցի (RTUK) կողմից «Դէմ առ դէմ» (Teke Tek) հաղորդաշարի փակումը, յայտնում է Zaman-ը: Ֆաթիհ Ալթայլի հեղինակային հեռուստածրագիրը, որը եթեր էր դուրս գալիս Haberturk հեռուստաալիքով, քննարկել էր Հայոց ցեղասպանութեան հարցը թուրք եւ հայ գիտնականների մասնակցութեամբ:*

*Յիշեցնենք, որ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի Արտաքին յարաբերութիւնների Յանձնաժողովի կողմից Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող թիւ 252 բանաձեւի ընդունումից յետոյ Ալթայլի հաղորդմանն էին հրաւիրուել պոլսահայ գրող, լեզուաբան Սեւան Նիշանեանը եւ հայատյացութեամբ յայտնի թուրք պատմաբան Եուսուֆ Հալաչօղլուն: Մի քանի չարքից բաղկացած հանդիպման ժամանակ Նիշանեանը կոչ է արել՝ լինել ճշմարտախօս եւ դատապարտել 1915 թուականի մահացունց դէպքերը, որին Հալաչօղլուն ցուցաբերել է խիստ ընդգծուած ժխտողական մօտեցում:*

# ԹՈՒՐՔԻԱՆ ՍՊԱՌՆՈՒՄ Է ԽԶԵԼ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՀԵՏ

*Թուրքիան սպառնում է խզել դիւանագիտական յարաբերութիւնները Իսրայէլի հետ, եթէ այդ երկրի իշխանութիւնները ներողութիւն չխնդրեն Մայիսի 31-ին Կազայի հատուածում «Ազատութեան նաւատորմիղի» վրայ կատարուած յարձակման համար:*

*«Իսրայէլը կա՛մ պէտք է ներողութիւն խնդրի կատարուածի համար, կա՛մ համաձայնի միջադէպի շուրջ միջազգային հետաքննութեանն ու դրա արդիւնքներին, հակառակ դէպքում Թուրքիան կը խզի յարաբերութիւնները այդ երկրի հետ», - թրքական պարբերականներից մէկին ասել է արտգործնախարար Ահմեդ Դաւութօղլուն:*

*Ի պատասխան՝ պաշտօնական Թել Աւիւը յայտարարել է, թէ Իսրայէլը չի պատրաստւում ներողութիւն խնդրել Թուրքիայից այդ երկրի 9 քաղաքացիների մահուան համար, որոնք գտնւում էին երբեակալուած նաւի վրայ:*

*Վարչապետ Բենիամին Նեթանյահուն յայտարարել է, որ Իսրայէլը ցաւում է, որ մարդիկ են զոհուել, բայց ներողութիւն չի խնդրի իրենց կեանքը պաշտպանած իսրայէլցի զինուորականների գործողութիւնների համար:*

*Նեթանյահուն նաեւ ընդգծել է, որ ուզում է խուսափել Թուրքիայի եւ Իսրայէլի փոխյարաբերութիւնների յետագայ սրացումից: Վարչապետը փոխանցել է, որ իր կաբինետի անդամներից մէկը այս շաբաթ հանդիպում է ունեցել թուրք բարձրաստիճան մի պաշտօնեայի հետ:*

# ՕՊԱՄԱՆ ՍՏՈՐԱԳՐԵՑ ԻՐԱՆԻ ԴԷՄ ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՕՐԷՆՔԸ

*Միացեալ Նահանգների նախագահ Պարաք Օպաման ստորագրել է Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցներ սահմանող օրինագիծը, որը Գոնկրեսն ընդունել էր անցած շաբաթ:*

*Ստորագրելով օրինագիծը՝ Օպաման ասել է, թէ այն կը թուլացնի սեփական միջուկային ծրագիր զարգացնելու Իրանի հնարաւորութիւնները:*

# ԷՌՆԵՍՏ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԿԱԼԱՆՔԻ ԺԱՄԿԷՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՈՒԵԼ Է



**Հայազգի լրագրող Էռնեստ Վարդանեան**

*Մերձդնեստրում լրտեսութեան եւ հայրենիքի դաւաճանութեան մէջ կասկածուող հայազգի լրագրող Էռնեստ Վարդանեանի կալանքի ժամկէտը անցած շաբաթավերջին երկարաձգուել է եւս մէկ ամսով:*

*Վարդանեանի՝ Հայաստանում ապրող հարազատների փոխանցմամբ, Տիրասպոլի քաղաքային դատարանը որոշումը ընդունել է կարճատեւ նիստում, որի օրուայ մասին չեն տեղեկացուել նոյնիսկ անազատութեան մէջ գտնուող լրագրողի ընտանիքի անդամները:*

*Յիշեցնելով, որ դատարանի նախկին նիստին ԵԱՀԿ-ի ներկայացուցիչներին չի թոյլատրուել ներկայ գտնուել, Վարդանեանի հարազատները պնդում են, որ «նման կոնսպիրատիվ մեթոդների նպատակը գործի միջազգային հնչեղութիւնը եւ դրա վերաբերեալ հասարակական կարծիքը լռեցնելն է»:*

*Հայազգի լրագրողի հարազատները հերթական անգամ կոչ են անում Մերձդնեստրի իշխանութիւններին «անսալ բանականութեան ձայնին եւ քաղաքական կամք ցուցաբերել Էռնեստ Վարդանեանի անյապաղ ազատ արձակման հարցում»:*

*Ծնունդով գիւմրեցի 30-ամյա Էռնեստ Վարդանեանը անազատութեան մէջ է Ապրիլի 7-ից: Վարդանեանի ձերբակալութիւնը դատապարտել են միջազգային տարբեր լրագրողական ու իրաւապաշտպան կազմակերպութիւններ եւ Մերձդնեստրի իշխանութիւններից պահանջել ազատ արձակել լրագրողին:*

# ՖՐԱՆՍԱՑԻ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ ԺԻՐԱՐ ՇԱԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ Է ՏԵՍՆՈՒՄ



Զինուած հակամարտութիւնների ուսումնասիրութեան եւ միջազգային ու ռազմավարական յարաբերութիւնների հարցերով վերլուծաբան Ժերար Շալեանի կարծիքով, Լեռնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման հաւանականութիւնը «այսօր աւելի է մեծ է, քան երբեւէ»:

Սիվիլիթաս հիմնադրամում կազմակերպուած քննարկմանը Ֆրանսիայում բնակուող հայկական ծագումով վերլուծաբանը իր կարծիքը հիմնաւորեց հետեւեալ կերպ. - «Ատրպէյճանն այսօր իրեն շատ աւելի ուժեղ է զգում, քան երբեւէ: Ատրպէյճանը նաեւ յոգնել է Լեռնային Ղարաբաղի հարցում փակուղային իրավիճակից, հետեւաբար կարող է ռազմական գործողութիւնների միջոցով պարտաւորեցնել միջազգային հանրութեանը, ինչպէս նաեւ Հայաստանին՝ գնալ խնդրի լուծմանը»:

«Ուստի, ես կարծում եմ, որ մենք պէտք է պատրաստ լինենք դիմակայել անակնկալ յարձակմանը: Այդ յարձակումը շատ կարճատեւ կը լինի, քանի որ ռուսները դրան կը միջամտեն եւ խաղաղապահ ուժ կ՚ուղարկեն: Բայց այդ ընթացքում շատ կարեւոր է ամէն ինչ անել հնարաւոր կորուստները նուազեցնելու համար», - յաւելեց նա:

Պատասխանելով հարցին, թէ որն է ռազմական գործողութիւններից խուսափելու ճանապարհը՝ վերլուծաբանը նշեց թէ պատերազմից խուսափելու համար զիջումներ պէտք է անել. - «Երկրի իշխանութիւնները պէտք է որոշեն, թէ հայերը ինչ զիջումների են պատրաստ, որպէսզի խուսափեն առճակատումից»:

Ժերար Շալեանի խօսքով, ղարաբաղեան կարգաւորման հարցում որոշում կայացնողները հիմնականում ռուսներն են լինելու, քանի որ Հարաւային Կովկասում իրավիճակի «արբիտրը հենց ռուսներն են»: Ի դէպ, վերլուծաբանի համոզմամբ, Ռուսաստանը Ղարաբաղի հարցում ունի միեւնոյն դիրքորոշումը, ինչ Աբխազիայի եւ Հարաւային Օսեթիայի հարցում, մէկ տարբերութեամբ՝ Արցախի հնարաւոր անկախութեան մասին Ռուսաստանը երբեք չի խօսել:

Վերլուծաբանը խիստ քննադատութեան ենթարկեց Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը եւ մասնաւորապէս հայ-թրքական արձանագրութիւնները. - «Արձանագրութիւնները, որ Հայաստանը ստորագրեց Թուրքիայի հետ. այնքան էլ խելամիտ չէին: Ես չեմ հասկանում թէ ինչո՞ւ Ցեղասպանութեան խնդրի հետ կապուած պէտք է լինի հայ-թրքական ընդհանուր Յանձնախումբ: Դա նման կը լինէր նրան, որ գերմանացիների եւ հրէաների միջեւ յանձնաժողով ստեղծուէր պարզելու համար, թէ ինչ է եղել 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին»:

Նա ընդգծեց, որ հայ-թրքական սահմանը փակուել է ոչ թէ Ցեղասպանութեան, այլ Լեռնային Ղարաբաղի խնդրի պատճառով՝ նշելով, որ Թուրքիայի արտգործնախարար Դաւութօղլուն շատ հնարամիտ քայլ արեց՝ ցոյց տալով որ «Անքարան պատրաստ է բանակցութիւնների, պատրաստ է ամէն ինչի, մինչդեռ Հայաստանն է, որ դժուարութիւններ է առաջացնում եւ պատրաստ չէ խաղաղութեան»:

«Թուրքիան չի վաւերացնի այդ արձանագրութիւնները, քանի որ դրանցից ոչ մի օգուտ չկայ եւ Հայաստանը նոյնպէս պատրաստ չէ վաւերացնել այդ արձանագրութիւնները - ասաց Ժերար Շալեանը:

Անդրադառնալով ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնի տարածաշրջան կատարելիք այցին՝ վերլուծաբանն ասաց՝ թէ այդ այցը շատ կարեւոր է, եւ տիկին Քլինթընը գալիս է «կոշտ հարցադրումներով, որոնց մասին մենք շուտով կ՚իմանանք»:

# ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱՐՈՂ Է ՅԱՅՏՆՈՒԵԼ ՀԻՒՐԱՆՈՑԻ ԲԱԿՈՒՄ

ԱՐՏԻՈՄ ՁԵՌՆԱՄՈՐԵԱՆ

Սուրբ Հողի համար պայքարը նոր չէ, որ սկսուել է, ու այդ համընդհանուր հակամարտութեան մէջ ցանկացած կողմ փորձում է եթէ ոչ շահել, ապա գոնէ իր ունեցուածքն ու կալուածքներն պահել: Հայոց պատրիարքարանը խոշոր հողատէր է համարւում Երուսաղէմում եւ այնպիսի հողակտորներ ունի, որոնց համար շատ ազգեր պատրաստ են հսկայական գումարներ վճարել: Սակայն հող կարելի է ձեռք բերել ոչ միայն ուղղակի գնելով, այլեւ այլ ճանապարհներով:



Դեռեւս 7 տարի առաջ հրէական շինարարական մի կազմակերպութիւն դիմել էր Երուսաղէմի Հայոց պատրիարքարան՝ Նոր քաղաքի Գերմանական թաղամասում գտնուող հայկական Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու յարակից տարածքը վարձակալութեամբ իրենց տրամադրելու խնդրանքով: Թաղամասում կառուցուելու էր հիւրանոցային համալիր, իսկ հայկական եկեղեցին էլ յայտնուելու էր հիւրանոցի բակում, համալիրի կամարների տակ, ինչը, անկասկած, անընդունելի էր:

Այս եկեղեցին կառուցուել է գերմանացիների կողմից 1887 թուականին եւ այնուհետեւ տեմպլիերների արտաքսուելուց յետոյ նուիրաբերուել Հայոց պատրիարքարանին:

Մի քանի ամիս առաջ Երուսաղէմի քաղաքապետարանի հետ այս շինարարական կազմակերպութիւնը համաձայնութեան էր եկել, եւ ըստ փոխադարձ պայմանաւորուածութեան, առանց հայկական կողմի համաձայնութեան, որոշուել էր եկեղեցու յարակից տարածքը տրամադրել շինարարներին, իսկ որպէսզի հրեայ բնակիչները չբողոքեն, ապա նաեւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին որպէս համայնքային կենտրոն պիտի տրամադրուէր հրեաներին: Թաղամասի բնակիչներն էլ ցոյց էին կազմակերպել եւ մի փոքր ուշացումով հրաւիրել էին նաեւ հայերին: 30 հայ ցուցարար էր մասնակցում բողոքի այս ակցիային, որի ընթացքում նաեւ կազմակերպուեց ստորագրահաւաք:

«Պէտք է փաստել, որ թէ՛ 7 տարի առաջ եւ թէ՛ այժմ Գերմանական թաղամասի բնակիչները դէմ են թաղամասի տարածքում բարձրայարկ հիւրանոցի կառուցմանը», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում ասել է Հայոց պատրիարքարանի միաբան Կորիւն վարդապետ Բաղդասարեանը:

Տասնեակ հազարաւոր մարդիկ, ըստ Կորիւն վարդապետի, իրենց համերաշխութիւնը յայտնեցին հայերին ու կտրականապէս դէմ էին հիւրանոցի կառուցմանն

Շար.ը էջ 19

Blue Cross of California
Authorized Agent
Blue Shield of California
Authorized Agent
A.B.A. INSURANCE SERVICES
SERVING SINCE 1975
BEDROS S. MARONIAN
(818) 500-9585
BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ


## ՇԱՀԷՆ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ՀՄԱՅԻՉ ԵԼՈՅԹԸ ԱՐՇԻԼ ԿՈՐՔԻԻ ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ

*ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆ*

*Կլենտէյլի Կեդրոնական Հանրային Գրադարանի հանդիսասրահը, Երեքշաբթի Յունիս 2ի երեկոյեան, ժամադրավայրն էր 250ի հասնող արուեստասէր հասարակութեան, որ ներկայ կ՚ըլլար եզակի ձեռնարկի մը՝ նուիրուած Արշիլ Կորքիի (Ոստանիկ Մանուկ Ադոյեան)( կեանքին ու նկարչական գերիրապաշտ արուեստին:*

*Դասախօսկան այս ձեռնարկին հրաւիրուած էր Հայաստանի Արուեստի Վաստակաւոր Գործիչ եւ Սուրբ Էջմիածնի Արշիլ Կորքիի անուան Թանգարանի տնօրէն Շահէն Խաչատրեան: Խաչատրեան քաղաքս կը գտնուէր անձնական այցելութեամբ, բայց 2009 Նոյեմբերին անոր այցելութիւնը կը զուգադիպէր գործիչին ծննդեան 75-ամեակին, որուն նշումը ձեռնարկի ձեւով դարձեալ կազմակերպուած էր Լոս Անճելոսի Թէքէեան Մշակութային Միութեան կողմէ:*

*Յատկանշական է այս առիթով յիշեցնել, թէ Լոս Անճելոսի Ժամանակակից Արուեստի Թանգարանը՝ MOCA, կը հիւրընկալէ Արշիլ Կորքիի տրամադրելի գրեթէ բոլոր գործերուն ցուցահանդէսը, որուն սկիզբն էր Լոնտի Թէյթ Կալլըրիի, ապա Ֆիլատելֆիոյ մէջ կատարուածները: Լոս Անճելսի ցուցահանդէսը պիտի տեւէ մինչեւ Սեպտեմբեր 6: Շահէն Խաչատրեան երեք ցուցահանդէսներուն որակի բաղդատականը ընելով, յիշեց թէ Ֆիլատելֆիոյ մէջ կայացածը ամէնէն ամբողջականն էր:*

*Ձեռնարկին բացումը կատարեց Թէքէեան Մշակութայինի վարչութեան անդամ Բարսեղ Գարթալեան, որ հմտօրէն ներկայացուց դասախօսին արուեստի աշխարհէն ներս ձեռք ձգած հարուստ վաստակը:*

*Դասախօսը հակիրճ կերպով ներկայացուց Ոստանիկ Ադոյեանի կեանքին առաջին տարիներու դժուարութիւնները: Վանի Այգեստանի շրջանին մէջ ծնունդը 1902ին, որբացած պաղթը՝ Էջմիածին, Երեւան ու Թիֆլիս: 1924ին Ադոյեան կը հասնի Միացեալ Նահանգներ ու կը նուիրուի նկարչութեան՝ միշտ դժբախտ ու տխուր կեանքը շարունակելով: 1948ին Արշիլ Կորքի անձնասպան կ՚ըլլայ ինքզինք կախելով: Մահուան յաջորդող քառորդ դարուն հասարակութիւնը անտեղեակ կը մնայ Կորքիի գործէն, մինչեւ որ Նիւ Ճըրզիի մեթրոյի կայանի մը պատին բազմաթիւ ներկի խաւերուն տակէն կը յայտնուի Կորքիի հրաշալի որմնանկարները: Յաջորդող տարիներուն է որ Կարլէն Մուրատեանի ու տարբեր ուսումնասիրողներու յայտնագործումները ռուս ճանչցուած հայ Կորքիին հանճարը կը կանգնեն:*

*Խաչատրեան իր դասախօսութիւնը ուսանելի եւ հետաքրքրական դարձուց համակարգիչի սահիկներուն մասնագիտական մեկնաբանութիւններով: Իր ունեցած քանի աւելի նկարներուն մանրամասն բացատրութիւնները նկարիչի ոճը, ոճի աստիճանական փոփոխութիւնները, գոյներու ընտրութիւնը, նկարած նիւթերու պատճառները, Կորքիի մղումը տուեալ նկարի պատրաստութեան՝ դասախօսութիւնը վերածեցին համալսարանական մակարդակով դասանիւթի՝ բոլորին կողմէ հասկնալի ու ըմբոշխնուած: Խաչատրեան մասնաւոր ուշադրութեան արժանացուց պատանի Ոստանիկի ու մօրը՝ Վարդուշի լուսանկարին պաստառի վերածումին նկարչական արժէքը:*

*Կ՚արժէ յիշել, մասնաւորաբար, ներկայութիւնը արձակագիր Սարգիս Վահագնի, որուն «Արշիլ Կորքի» վէպը վերջին քանի մը տարիներու գրական լաւագոյն գործն էր Սփիւռքի տարածքին:*

*Թէքէեան Մշակութային Միութեան ամենամսեայ գնահատելի ձեռնարկներէն մէկը վայելեցին սրահը լեցուցած արուեստասէրներ:*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE.
PASADENA

ՀԵՌԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680

## ՀԲԸՄ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ԵՐԳԻՉ ԵՒ ԵՐԳԱՀԱՆ ԳՈՌ ՄԽԻԹԱՐԵԱՆ



*Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ մասնաճիւղերը հպարտութեամբ կը ներկայացնեն հայազգի երգիչ եւ երգահան Գոռ Մխիթարեանը՝ գործակցութեամբ Փասատինայի Լէվիթ-Փաւիլիոնի, Ուրբաթ, 9 Յուլիսին:*

*Լէվիթ-Փաւիլիոնը ՀԲԸ Միութեան նման, ամերիկեան ոչ շահաբեր հաստատութիւն մըն է: Անոնց առաքելութիւնն է զարկ տալ արուեստներուն մեր գաղութներէն ներս:*

*Գոռ Մխիթարեան Հայաստանի մէջ հանրածանօթ անուն մը ըլլալու կողքին լաւ ճանչցուած է նաեւ ամերիկեան շրջանակներուն մէջ: Ան իր ասպարէզը սկսած է 2001 թուականին եւ ցարդ հրապարակ հանած է 7 ձայնապնակներ:*

*Գոռ Մխիթարեան 2003 թուականին կը հաստատուի Լոս Անճելոս, ուր իրեն կը միանան երաժիշտներ Վարուժան Յովակիմեան, Արթ Գիրգորեան եւ Ճէյ Տին:*

*«Գոռի մշակած եղանակները իր հրաշալի ձայնին եւ քնարերգական տաղերուն առընթեր, թէեւ պարզ են՝ սակայն անուշ եւ թարմ կը հնչեն մեր ականջներուն կը գրէ Եաթրիքա Շահ-Ռայիս, Global Village-ի (KPFK 90.7 FM) հիւրընկալն ու արտադրիչը:*

*Եկէք եւ ձեր ընտանիքի անդամներուն հետ միատեղ վայելեցէք երաժշտական գեղեցիկ պահեր՝ Փասատինայի բացօթեայ պարտէզին մէջ, իրիկնային աստղերուն ներքեւ:*

*Բացօթեայ պարտէզ՝*
*Memorial Park*
*Raymond Street*
*Walnut եւ Holly փողոցներուն միջեւ*
*Old Town Pasadena*






# ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍՆԵՐԸ

«Դո՛ւն, խաչբուռն այս, զոր իմ ձեռքովն եմ հիւսեր, ընդունէ, Մայր...»
Դանիէլ Վարուժան

Յունիս է կրկին՝ բոլոր վարժարաններու հասուն, բերրի, հունձքի պահ:

Վերջին քանի մը ամիսներու ընթացքին, Մերտինեան Վարժարանէն ներս, Մանկապարտէզէն, մինչեւ Միջնակարգի աշակերտները, անձկութեամբ կը սպասէին այս պահը, որ այժմ իմանց աչքերը յուզումով լեցուցած է, սակայն բոլորին սրտերը՝ հպարտութեամբ, ուրախութեամբ:

Կիրակի, Յունիս 20, 2010ին, ժամը 4:00ին տեղի ունեցաւ Մերտինեան վարժարանի ամավերջի հանդէսը, որու ընթացքին վկայուեցան նախակրթարանէն 17, իսկ միջնակարգէն 14 աշակերտներ: Սրահը լեցուն էր երջանիկ ծնողներով, հարազատներով, ներկայ էին հոգաբարձութեան անդամներ եւ հիւրեր:

Հանդիսութիւնը սկսաւ շրջանաւարտներու խրոխտ մուտքով, անոնք կատարեցին ամերիկեան եւ ազգային քայլերգներու երգեցողութիւնը, ապա բացման աղօթքը կատարեց Վեր. Յովսէփ Մաթոսեանը: 8րդ կարգը իր տեղը գրաւելէ ետք, Ե. կարգի աշակերտները խմբովին արտասանեցին անգլերէն լեզուով «success» քերթուածը, որմէ ետք ստացան իրենց վկայականներն ու մրցանակները:

Առաջին խօսք առնողը եղաւ Հոգաբարձութեան ատենապետ՝ Տօքթ. Հրայր Աթիքեանը, ան նախ շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն իրենց զաւակները այս հաստատութեան յանձնած ըլլալնուն համար, շնորհաւորեց զանոնք, իսկ այս տարուան շրջանաւարտներուն փոխանցեց իր բարեմաղթութիւնները:

Յայտագրի գեղարուեստական բաժնին մէջ ելոյթ ունեցաւ վարժարանի երգչախումբը որ ներկաներուն հրամցուց հոգեւոր եւ ժողովրդային երգերու փունջ մը:

Օրուան պատգամաբերն էր տիար Գրիգոր Յովհաննիսեանը, գլխաւոր հիւպատոս Հայաստանի Հանրապետութեան: Ան շրջանաւարտներուն փոխանցեց հայրենիքի՝ իրենց քոյրերուն ու եղբայրներուն խնդակցութիւններն ու շնորհաւորութիւն ները, գիրենք կոչեց Հայկի ու Արամի ժառանգները եւ թելադրեց անոնց ըլլալ իրենց նախահայրերուն նման ազատատենչ, քաջ ու հայրենասէր: Հիւպատոսի կորովի, ներշնչող խօսքերէն ետք 8րդ կարգի աշակերտները խմբովին արտասանեցին Ժագ Յակոբեանի «Հայը Անհայ Ափերուն» քերթուածը:

Եւ վերջապէս, իրենց ուսումնական կեանքը միայն ու միայն այս վարժարանին մէջ անանցուցած 14 «Մերտինեանցի»ները ստացան իրենց վկայականներն ու մրցանակները: Ապա խօսքը առաւ վարժարանի տնօրէն պրն. Յովսէփ Ինճէճիքեանը, որ ազամ մը եւս, արդար հպարտութեամբ, իր «հունձքը» հրամցուց ծնողաց, ազգին, զանոնք կոչելով Մերտինեան Վարժարանի արժանաւոր դեսպանները, անգամ մը եւս յիշեցուց անոնց իրենց ստացած ուսման, կրթութեան եւ դաստիարակութեան մասին, եւ շեշտեց, թէ ուր որ ալ երթան, պարտին զանոնք իրենց հետ տանիլ, որպէս կռուան որպէս վահան:

Շար.ը էջ 19









# ՅՈՒՆԻՍԵԱՆ ՂՕՂԱՆՋՆԵՐ
## ԱՒԱՐՏԻՆ ՀԱՍԱՒ 2009-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ...

Նորից տարեվերջեան յուզումնալից տրամադրութիւն էր տիրում «Փոքրիկ Հրեշտակներ» դպրոցում: Յունիսի 18ին 0 դասարանցիները ստանալու էին իրենց աւարտական վկայականները, որի համար անչափ ուրախ էին ու ոգեւորուած: Աւարտական հանդերձով նրանք կարծես ճերմակաթեւ աղաւնիներ լինէին: Մինչ վկայականներ ստանալը, 0 դասարանցիները ծնողներին եւ հիւրերին ներկայացան գեղեցիկ մի ծրագրով, որը նուիրուած էր Մեծ ուսուցչապետ Մեսրոպ Մաշտոցին, Մայրենի լեզուին եւ սիրասուն Հայաստան աշխարհին: Շատ տպաւորիչ էր երեխաների ասմունք, երգը: Մէկը միւսի ետեւից նրանք հնչեցնում էին օրուայ խորհուրդն արտայայտող բանաստեղծութիւններ եւ երգեր:

Դպրոցի տնօրէնութիւնը շնորհաւորեց 0 դարարանի իր սաներին աւարտական վկայականներ ստանալու եւ առաջին դասարնցիներ դառնալու կապակցութեամբ, մաղթեց նրանց արեւշատութիւն, նոր կամք ու կորով այսուհետ եւս դառնալու ուսման առաջաւորներ, Հայրենիքի ու մարդկութեանը պիտանի զաւակներ...

Իսկ Յունիսի 19ին, Շաբաթ առաւօտեան առաւել յուզուած էին երկրորդ եւ երրորդ դասարանների սաները: Նրանք յուզումով ու սրտի թրթիռով էին նախապատրաստւում աւարտական հանդիսութեանը. այդ օրը հրաժեշտ էին տալու իրենց համար այնքան հարազատ դարձած առաջին կրթօճախին՝ «Փոքրիկ Հրեշտակներ» դպրոցին, ուր անց են կացրել իրենց մանկութեան լաւագոյն տարիները, կրթուել եւ դաստիարակուել, հասկացել լաւն ու բարին:

Բացման խօսքին յաջորդեց սաների ելոյթը: Հնչեցին Ամերիկայի Միացեալ Նահանգների ու Հայաստանի Հանրապետութեան օրհներգերը: Անյուհետեւ աշակերտները ներկայացրին Գէորգ Էմինի «Յաւերժի ճամբորդը» ստեղծագործութիւնը՝ միաժամանկ զարգացնելով այն Պ. Սեւակի, Գ. Էմինի, Հ. Սահեանի եւ Վ. Դաւթեանի առինքնող բանաստեղծութիւններով, գեղեցիկ ու սրտառուչ երգերով, որոնք համահունչ էին ստեղծագործութեան բովանդակութեանը:

Իսկ, երիտասարդներուն ցանկին վրայ կան ընտանիքներ, որոնց ամուսինները լքած են կին ու զաւակ եւ հեռացած են տունէն: Պահ մը դուք գծեզ դրէք այս մայրերուն տեղը: Մայրերը երաժիշտներն, մին՝ երաժշտահան եւ դաշնակահար, որ teen-age աղջիկ մը ունի, միւսը՝ երգչուհի եւ դաշնակահար, որ հայրենիքի ծառայութեան համար բանակ կանչուած տղայ մը ունի: Երկու մայրերն ալ դասաւանդման մի քանի պահեր ունին միայն, որոնց աշխատանվարձով անհնարին է ապրիլ:

Պատմեմ հետեւեալ յուզիչ դէպքը զոր պատահեցաւ անցեալ տարի:

Ուրեմն, երբ տիկինս ու ես ժամադրուեցանք յիշեալ երգչուհի-դաշնակահարուհիին հետ, յանձնելու համար օգնութեան իրեն ինկած բաժինը, մեծ յուզումով ու հեծկլտալով ըսաւ. պրն. Փիտէճեան, Աստուած ղրկեց այս անձին օգնութիւնը: Չէք կրող երեւակայել թէ որքան երախտապարտ եմ այս օգնութիւնը ղրկողին: Որովհետեւ այսօր, առաւօտ կանուխ բանակէն լուր տուին որ տղաս հիւանդացած է, թոքատապէ (pneu-

Շար.ը էջ 17

# ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԾԱՌԸ

***ԱՐՄԻՆԷ ՄԵԼԻՔ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ***

Ջիթենու կանաչ ճիւղ տնկեց Արարատից իջած Նոյ նահապետը: Առաջին ծառատունկը համաշխարհային ջրհեղեղից յետոյ կատարեց Հայաստանում եւ դարձաւ սրբազան աւանդոյթ... Հայոց Արտաւազդ արքան իր նորածին Անու՛շաւան որդուն սօսիների անտառ նուիրեց: Անուշաւան Սոսանուէր արքայի օրօք ծառերի պաշտամունքն հեթանոս աշխարհի ամենախորհրդաւոր հաւատալիքներից մէկն էր... Անցան ժամանակներ եւ անցեալի պաշտամունքի հետքերն իբրեւ արգելոց անտառներ ժառանգութիւն մնացին մեզ՝ մեր բնապաշտ նախնիներից...

Արքաների լեգենդը նոր ծիլեր տուեց անկախութեան ճանապարհ ելած, հայ ժողովրդի կրած ցուրտ ու մութ տարիների ծառասպանդից յետոյ...

Խաղաղութեան հաստատումից յետոյ Հայաստանում եւ Արցախում յատկապէս անհատների, նրանց կողմից հիմնուած հիմնադրամների կողմից ծառատունկն աւանդական դարձաւ, իր մէջ ընդգրկելով սփիւռքի հայութեանը եւս, որն այս կերպ կարծես մօտենում եւ մերձենում է իր հայրենիքին ու արմատներին, կրճատելով սահմանային ամէն տեսակ տարածութիւնները:

Ծառատունկը բարեկամութեան հաստատման, յիշատակի յաւերժացման, սեփական հետքը թողնելու գեղեցիկ խորհուրդ ունի մեզանում:

Իրան-Հայաստան բարեկամութեան միութիւնն առաջին անգամը չէ, որ բարեգործական առաքելութեամբ ԻԻՀ-ից Հայաստանի Հանրապետութիւն է առաքում մեծ քանակութեամբ պտղատու տընկանիւթ: Մայիսի 17- ին Հայաստանի Գիւղատնտեսութեան Նախարարութեանը ուղարկեց 2500 տնկի, որոնք գնել էին Իրան - Հայաստան բարեկամութեան միութեան յայտարարած դրամահաւաքի արդիւնքում, միութեան ղեկավարի՝ Լեւոն Ահարոնեանի անմիջական մասնակցութեան շնորհիւ: Տնկիների տեղաբաշխումն իրականացնող ՀՀ Գիւղատնտեսութեան փոխնախարար Սամուէլ Գալստեանին հանդիպեցինք իր բնակավայրում, Արարատի մարզի Քաղցրաշէն գիւղում, ուր փոխնախարարը հրահանգում էր տընկիների վերջին քանակի յատկացումները... Հայ-իրանական բարեկամութիւնը խորհրդանշող հերթական ծառն էր տնկւում հայոց բարեբեր հողի վրայ: Փոխնախարարի համոզմամբ, այդ բարեկամութիւնը նոր սկիզբ է խորհըրդանշում, որը ինչպէս նորատունկ ծառը խնամուելով պիտի տայ իր սպասուած պտուղները...

_Պետական կառավարման մարմնում ունեցած փոխադարձ աշխատանքային գործունէութեան պայմաններում ծանօթացայ մի հաստատակամ հայ ազգային գործչի՝ Լեւոն Ահարոնեանի հետ: Հայ - իրանական տնտեսական համագործակցութեան նոր փուլ մտնելուն էր ուղղուած անցեալ տարի ԻԻՀ - ում Իրանի եւ Հայաստանի արդիւնաբերական պալատների ղեկավարների համատեղ ջանքերով կազմակերպուած ֆորումը, որին Հայաստանի կառավարական պատուիրակութեան հետ ներկայ եղայ եւ

Շար.ը էջ 17



Singer Mohamad Salem

EVERY SATURDAY
Live Arabic Music
MOHAMAD SALEM
& HIS BAND

Lebanese Special Mezza ..............per person $27
Hummos, Imtabbal, Tabbouleh, Falafel, Spinach and Meat Pies, Raw Kubbeh, Salad, Kebbeh, Vegetarian Grape Leaves, Labneh, Feta Cheese, and Shawarma (Beef or Chicken). Your choice of Kebabs (Lamb, Bref, Chicken, and Kafta).


Sheik Wahib

WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT
ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՄԵՆԱՀԱՄԵՂ ՃԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ: ՈՒՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԲԱՑՕԹԵԱՅ ՆՍՏԵԼՈՒ ՔԱԺԻՆՆԵՐ
Բաց է Շաբաթը 7 օր: Ունի յատուկ սրահ հաւաքոյթներու

(626) 281-1006
(626) 576-1048
910 E. Main Str.
ALHAMBRA, CA

WHOLE LAMB SPECIAL
$245.00 + Tax
Whole Lamb Stuffed with Rice, Almonds, Pine Nuts and Pickles
WHOLE LAMB WITH MEZZA
$399.00 + Tax

LEBANESE SUSHI

| | |
|---|---|
| Raw Kubbeh | $10.95 |
| Habra Nayieh | $10.95 |
| Raw Liver | $10.95 |
| Kafta Nayieh | $10.95 |




CALL WAHIB FOR RESERVATIONS

# ՆՈՐ ԳԻՐՔԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՄԷՋ
## ԴՈԿՏ. Տ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ ԿՈՂՄԷ

*Յունիսի 18-ին, մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ, Արեւմտեան Թեմէն Դոկտ. Տ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան հրաւիրուած էր ներկայացնելու համար իր վերջին երկու հրատարակութիւնները: Հրաւէրը եկած էր Ս. Մարիամ Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Յովսէփ Քհնյ. Կարապետեանի եւ Ծխական Խորհուրդին կողմէ:*

*Եկեղեցւոյ մշակութային սրահին մէջ գրասէր հոծ բազմութիւն մը հաւաքուած էր ողջունելու այցելու հոգեւորականը, նախ հիւրասիրուելու եւ ապա հեղինակին կողմէ ունկնդրելու նոր հրատարակութեանց մասին: Բացման իր սրտի խօսքով յանուն Ծխական Խորհուրդին հանդէս եկաւ փոխատենապետ Պրն. Մայք Թաշճեան որ անդրադարձաւ իր վաղեմի հարազատին մտաւորական եւ հոգեւորական ծառայութեանց, բարի գալուստ մաղթեց իրեն, յայտնելով նաեւ որ այս մէկը առաջին հանդիպումն էր որ տեղի կ'ունենար այս նոր գիրքերու հրատարակութեան առիթով: Ապա խօսք առաւ հոգեւոր հովիւը՝ Տ. Յովսէփ Քհնյ. Կարապետեան որ իր կարգին բարի գալստեան ջերմ խօսքերով բեմ հրաւիրեց Դոկտ. Զաւէն Ա. Քահանան ներկայացնելու համար իր վերջին երկու հրատարակութիւնները որոնք լոյս տեսած էին երեք շաբաթներ առաջ Գալիֆորնիոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանին կողմէ՝ մեկենասութեամբ Տիկ. Հելէն Մարտիկեանի ի յիշատակ իր ամուսնոյն՝ ազգային բարերար Եդուարդ Մարտիկեանի:*

*Տէր Զաւէն Հայրը բովանդակալից ծանօթութիւններ տուաւ նախ երկլեզու «Հայ Եկեղեցւոյ Պատմութեան եւ Պաշտամունքի» մասին իր պատրաստած երկի մասին: Սոյն հատորին մէջ կը կարդանք Հայ Եկեղեցւոյ Ծագումի պատմական տուալներու մասին՝ գիտական տարողութեամբ, ինչպէս նաեւ Հայ Եկեղեցւոյ Կիւրեղեան Քրիստոսաբանութեան վարդապետութեան մասին որուն հետեւեցաւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին հինգերորդ դարէն սկսեալ: Նոյն հատորին մէջ, ինչպէս հեղինակը բացատրեց, ամփոփուած են նաեւ մեր եկեղեցւոյ ժամերգութեանց եւ պաշտամունքին վերաբերեալ աստուածաբանական եւ Ս. Գրային վերլուծումներ՝ Արեւագալի, Խաղաղականի եւ Հանգստեան ժամերգութեանց, ինչպէս նաեւ «աւանդութիւն» հարցի վերլուծումը որ ինքնին Հայ Եկեղեցւոյ եւ ընդհանուր եկեղեցւոյ համար արժէքաւոր աղբիւր մը հանդիսացած է Ս. Գրքի կողքին:*

*Նոյն հատորով հեղինակը քննարկած է նաեւ Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցի դրութիւնը՝ պարզաբանելով տարուան մեծ եւ փոքր տօներու եւ սուրբերու, ինչպէս նաեւ պահքի վերաբերեալ օրերու եւ շաբաթներու համամետական բաշխումը՝ բոլորն ալ կախեալ Ս. Զատիկի թուականէն, բացի անշարժ տօներու թուականներէն որոնք եւս նշուած են յարաբերաբար: Կարեւոր մէկ ուսումնասիրութեամբ մը կը փակուի սոյն գիրքը՝ նուիրուած 1915 թուականի Ցեղասպանութեան նահատակներու յիշատակին ընծայուած ուղեցոյցով մը որով կ'առաջադրուի կանոնականացնել եւ սրբացնել խմբովին մեր Ապրիլեան Նահատակները՝ սկսելով Արմաշի Դպրեվանքի հոգեւորականներու նահատակութիւններէն որոնք սպաննուեցան իրենց պաշտօններուն վրայ: Ինչպէս կ'ըսուի գրութեան սկիզբը սոյն ուղեցոյցը յանձնուած է Ամենայն Հայոց Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի բարձր նկատողութեան:*

*Դուտ. Տ. Զաւէն Հայրը ներկայացնելով անգլերէն լեզուով գրած իր երկրորդ գիրքը ընդգծեց թէ իր բովանդակութեամբ Հայ Եկեղեցին Երջանկայիշատակ Տ. Տ. Վազգէն Ա. Հայրապետի երկարամեայ գահակալութեամբ հանդիսաւոր մուտք կը գործէր 21-րդ դարէն ներս: Հատորը Հայ Եկեղեցւոյ վերջին յիսնամեակի հոգեւոր, ազգային, մշակութային եւ միջ-եկեղեցական յարաբերութեանց է որ կը վերաբերի՝ 1955 թուականէն մինչեւ 1999, դարակազմիկ յոբելեաններու նշումներով եւ մանրամասնութիւններով՝ ներկայ սերունդի անգլիախօս մեր ժողովուրդին համար:*

*Մայր Աթոռի եւ Հայրենիքի մէջ կատարուած աննախընթաց շինարարութիւններն ու վերանորոգումները, գլխաւորութեամբ Մայր Աթոռի Վեհարանի ազատագրման ու հիմնովին մարմարապատման, կնիքը թողուց Երանաշնորհ Հայրապետի մեծ վաստակին: Նոյնպէս գիրքը լիովին անդրադարձած է Վազգէն Հայրապետի տասնէ աւելի արտասահմանեան Հովուապետական այցելութեանց, օտար յարանուանութեանց պետերու հետ անձնական շփումներուն, զանոնք Մայր Աթոռ հրաւիրելով ու Հայ Եկեղեցին ի նորոյ աշխարհացրիւ հայութեան եւ ազգութեանց պատուաւոր կերպով ներկայացնելով:*

*Միջ-եկեղեցական յարաբերութեանց շրջագիծին մէջ հեղինակը շեշտեց որ Հայ Եկեղեցին գործօն մասնակցութիւն ունեցաւ 1962 թուականէն սկսեալ երբ Հայրապետական կոնդակով Հայ Եկեղեցին դիմեց ու անդամ դարձաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին որպէս միայուն անդամ, որուն համաժողովներուն կանոնաւորապէս Մայր Աթոռ մասնակից դարձաւ յատուկ ներկայացուցիչներով: Հայ Եկեղեցւոյ արտասահմանեան թեմերը աւելցան վեց նոր թեմերով, եւ Հայ Եկեղեցին օժտուեցաւ 60-է աւելի եպիսկոպոսներով՝ բոլորն ալ ձեռնասունները Վազգէն Ա Հայրապետի:*

*Իր փակման խօսքերուն մէջ հիւր հոգեւորականը իր գնահատանքն ու շնորհակալութիւնը յայտնեց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Յովսէփ Քհնյ. Կարապետեանի, Ծխական Խորհուրդին, Մայք Թաշճեանին, Տիկնանց Միութեան, եւ գրասէր հասարակութեան՝ իրենց ներկայութեանը համար: Ան յատկապէս նշեց ներկայութիւնը երաժշտագէտ եւ ծանօթ խմբավար Պրն. Արսէն Սայեանի եւ իր տիկնոջ, Ֆլորիտայէն յատկապէս եկած Տոքթ. Կրէկըրի Պոյաճեանի եւ իր որդիին Ալեքսի, Տէր Զաւէնի եղբօրորդւոյն՝ Դոկտ. Զաւէն Արզումանեանի եւ բոլոր յարգելի ներկաներուն: Տոքթ. Պոյաճեան իր կատարած բացառիկ նուիրատուութեամբ Ս. Աստուածածին եկեղեցւոյ գրախանութին, պատուեց երեկոն »ի պատիւ գիրքերու հեղինակին ու իր մտերիմ բարեկամին«:*

*Կիրակի, Յունիս 20-ին, Տ. Յովսէփ Քհնյ. Կարապետեանի կանխօրօք մատուցած հրաւէրին ընդառաջելով, Տէր Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան պատարագեց եւ քարոզեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:*

*ՏԶԱ*

# «ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ»Ը ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵՑԱՒ ԿԻՊՐԱՀԱՅՈՒԹԵԱՆ

«...Պատմութեան սիրոյն եւ յաւերժացնելու համար Անմահ Բարերարներուն յիշատակը, մանաւանդ բոլո՛ր մելգոնեանցիները նո՛յն պատնէշին վրայ համախմբելու տեսանկիւնէն դիտուած, վաղուց անհրաժեշտութիւն դարձած էր եզակի Հաստատութեան «Յուշամատեան»ի լոյս ընծայումը, Հաստատութիւն մը, որ իր դռները օր մը պիտի վերաբանայ վերանորոգ ծրագրումներով եւ առաքելութեամբ,

ի խնդիր հայ գիրի եւ դպրութեան»:

Ե.Գ.



*Հինգշաբթի, Յունիս 24-ին, երեկոյեան ժամը 7-ին, Կիպրոսի Ազգային Առաջնորդարանի «Վահրամ Իւթիւճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Մելգոնեան Կրթական Հաստատութեան Յուշա-մատեան»ի շնորհանդէսգինեձօնը, հովանաւորութեամբ կաթողիկոսական փոխանորդ Վարուժան արքեպիսկոպոսի, նախագահութեամբ կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի եւ զօրակցութեամբ Կիպրոսի ՄԿՀ Սանուց Միութեան:*

*Բացման խօսքին մէջ, անդրադառնալով Հայկական Ցեղասպանութենէն վերապրած հայ որբերը կորուստէ փրկելու, կրթելու ու դաստիարակելու նպատակով հիմնուած եւ ապա հայ լեզուի ու մշակոյթի իւրօրինակ ամրոց դարձած Հաստատութեան անցեալին, Տոքթ. Անդրանիկ Աշճեան հրաւիրեց օրուան պատգամախօսը՝ Վարդան Թաշճեանը, ներկայացնելու համար «Մելգոնեան Կրթական Հաստատութեան Յուշամատեան»ը:*

*Օրուան պատգամախօսը իր ելոյթը սկսաւ «խոնարհել»ով եւ «երկրպագել»ով տաղանդին ու բարութեան առջեւ:*

*Այո՛, տաղանդի եւ բարութեան խորհրդանիշ է Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, ուր 79 տարիներ շարունակ, հնչեցին «Աւետիս Հայեր»ը եւ «Անմահ Լուսոյ»ն, կենսատու եւ կենսունակ մնացին Մեսրոպ Մաշտոցի երեսունվեց կոթողները:*

*Հաստատութեան մէջ հասակ եւ ուսում առած Վարդան Թաշճեան, շնորհապարտ մելգոնեանցիին յատուկ եւ անսահման երախտագիտութեամբ, արտայայտուեցաւ Անմահ Բարերարին մասին, որ իր վրիժառու գաւազանը կը զարնէր գետի՛ն, հիմը դնելով «մեր հարազատ հոգետան», որպէսզի այս դպրոցը մեր վրէժը լուծէ, այդ որբ ձագուկները իրենց հօրենական տունը նորէն շինեն, եւ անոնցմէ պատրաստենք մեր նո՛ր մեծերը:*

*Ապա, հանգրուան առ հանգրուան, լուսարձակի տակ առնելով Հաստատութեան 79-ամեայ պատմութիւնը՝ որբանոցի օրերէն մինչեւ վարժարանի «որբացում»ը, պատգամախօսը, մանրամասնօրէն եւ բծախնդրութեամբ, ներկայացուց «Յուշամատեան»ի ճոխ բովանդակութիւնը, որ հեղինակը, իր անձնական նախաձեռնութեամբ, դեռեւս ութ տարիներ առաջ, աշխատանքը սկսած եւ ծրագրած էր լոյս ընծայել «իբրեւ 80-ամեակի տօնակատարութեանց փառաբանանքի ու պայծառացման պերճախօս ընծայաբերումը մը, սիրոյ եւ յարգանքի տուրք մը...»:*

*«Լիբանանահայ մտաւորական, ուսուցիչ եւ մամուլի նուիրեալ Եղիա Գայայեանի մտայղացումով, նպատակադրումով ու անխոնջ ջանքերով առարկայացած այս հսկայական աշխատանքը արժանի է ջերմ գնահատանքի եւ ծափահարութեան: Յարատե՛ւ, հմո՛ւտ, յամա՛ռ, մեղուաջա՛ն գործի եւ անձնական զոհողութեան պտուղն է անիկա, գեղեցկօրէն դասաւորուած, խնամեալ, հետաքրքրական, առանց դոյզն ինչ կաշկանդումի կամ նախապաշարումի», ընդգծեց Վարդան Թաշճեան:*

*«Մելգոնեան Կրթական Հաստատութեան Յուշամատեան»ը աղօթքի ընթերցանութեամբ եւ միւռոնով օծելէ ետք, Վարուժան արքեպիսկոպոս գնահատանքի եւ դրուատանքի խօսքերով անդրադարձաւ Հաստատութեան շուրջ 80-ամեայ պատմութեան եւ իրագործումներուն*

*Շար.ը էջ 18*

## ԱՆԳՈՅՆ ՄԱՐԴԻԿ

*ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ*

*Դասակարգ մըն են անոնք, ոչ տեսակէտ ունին, ոչ համոզում ու նպատակ եւ ոչ ալ ձգտում որեւէ բան իրագործելու համար: Անոնք կը կոչուին անգոյն մարդիկ:*

*Ո՛, ո՛չ, ներողութիւն, անոնք անպայման ունին բան մը՝ ձգտում մը իրենց փորը լեցնելու, բնազդական այլազան պարտականութիւններ կատարելով ապրելու համար: Անոնք ոչ Հնչակեան են, ոչ դաշնակցական, ոչ ռամկավար, ոչ հանրապետական կամ դեմոկրատ եւ ոչ ալ սոցիալիստ կամ կոմունիստ: Այս երեւոյթը իբրեւ ոչ միայն հայկական, այլ համամարդկային է, սակայն մեր ակնարկը կեդրոնացնենք հայկականին վրայ, հայանուն անգոյն մարդոց վրայ: Ինչպէս ըսինք, անոնք ոչ հնչակեան են, ոչ դաշնակցական, ոչ ռամկավար կամ համայնավար, այլ չէզոք, որ համազօր է բան մըն ալ չըլլալու... ոչինչի:*

*Այս ակնարկին ցաւով զանց կ'ընենք Հայաստանը, ուր կուսակցութիւններու թիւը կրնայ բաղդատութեան դրուիլ իւրաքանչիւր կուսակցութեան անդամներու թիւին հետ: Ցաւով ըսինք, որովհետեւ, այս ակնարկը խորացնելու պարագային երեւան պիտի գար որ Հայաստանի կուսակցականներուն պարտականութիւններն ու ծառայութեան ծիրը աւելի «ընդարձակ» են, քան սփիւռքիններունը, քանի որ, անոնք գաղափարականէն անդին եւ աւելի այդ կուսակցութեանց սեփականատէրերուն պէտք է ծառայեն...:*

*Վերոյիշեալ դասակարգին համար հայ կուսակցութիւնները, Բարեգործականը, Համազգայինը, Թէքէեան մշակ. միութիւնը, կամ Նոր Սերունդը աւելորդ կազմակերպութիւններն են: Անոնք անհանգիստ կը զգան եթէ գիրենք այս կամ այն կողմին համակիր նկատելու արտայայտութիւններ լսեն: Չեմ գիտեր թէ իրենց ազգային պատկանելիութեան մասին ինչ կը խորհին: Կը զգա՞ն որ հայ են, կ'ապրի՞ն իրենց հայութիւնով, թէ այնպէս կը դաւանին թէ իրենք հայ ծներ են պարզապէս: Ինծի կը թուի թէ այս վերջին ենթադրութիւնն է ճիշդը: Անոնք պարզապէս հայ ծնողներէ սերած են, բան մը որուն մէջ իրենք պատասխանատուութիւն չունին, իրենց կամքէն անկախ պատահար մըն է ատիկա, որ գիրենք որեւէ պարտաւորութեան տակ չի դներ: Անոնք պատրաստ չեն զգար ազգով ու հայրենիքով հետաքրքրուելու, բարոյապէս ու նիւթապէս անոնց օժանդակելու, եւ այլն: Անոնք ազգային ձեռնարկներու ալ չեն մասնակցիր, վճարումներէ կը խուսափին, նոյնիսկ անվճարներէն կը բացակային: Անշուշտ այդ ձեռնարկները կազմակերպողներ ունին եւ, հետեւաբար, անոնց մասնակցիլը կողմի մը անդամ, կամ համակիր ըլլալ կ'ենթադրէ, մինչ իրենց չէզոքութեան մունետիկներն են, անգոյն արարածներ: Ուտելու համար ապրող, ապրելու համար ուտող, տեսակէտ ունենալու եւ արտայայտելու քաջութենէն զուրկ՝ անողնայար արարածներ:*

*Վերջապէս, անգոյն մարդիկ, որոնց ներկայութիւնը իրենց շրջապատին մէջ զգալի չէ եւ չի կրնար ըլլալ: Այսպիսիներուն աշխարհի վրայ գոյութիւնը սահմանուած է ըլլալու անձնակեդրոն, աւելորդ եւ անօգուտ կեանք մը՝ ապրելու, որքան որ տէրը կ'ուզէ, առանց իրենց գոյութեան նուազագոյն հետքը ձգելու ազգային թէ հաւաքական կեանք. ին մէջ, բացի ընտանեկան եւ անհատական նեղ շրջանակէ մը: Բայց իրենց խեղճութեան առանց գիտակցելու կը համարձակին խելք ալ տալ մեր հողային պահանջով զբաղողներուն, իմաստակութեան վերին աստիճաններէն հարց տալով ըսենք թէ տուին այդ հողերը, դուն կ'երթաս հոն կ'ապրի՞ս...: Եւ մեր սրբազան դատը այդպէս կը փոքրացնեն, իրենց խելապատիկին հասած չափով, անհատական նախասիրութեան հարցի մը վերածելով զայն:*

Ձեր Ծանուցումները
Վստահեցէք
«Մասիս»
Շաբաթաթերթին

T: (626) 797-7680
F: (626) 797-6863
massis2@earthlink.net

## ՏԵՍԱՅ... ԵՒ ՍՈՐՎԵՑԱՅ

*Տեսայ կարգ մը մարդոց ու սիրեցի զիրենք:*

*Չտեսայ կարգ մը մարդոց եւ չուզեցի տեսնել... սակայն երվեմն ստիպուեցայ տեսնել: Երվ տեսայ, ցանկացի որ տեսած չըլլամ որովհետեւ յայտնավերեցի որ »չեմ տեսներ«... ու տակաւին չսորվեցայ:*

*Տեսայ մարդիկ, որոնց սրտին մէջ ընդհարուած են չփոթի ալիքները... կտրելով անոնց սրտին առողջ դատողութեան նաւերը: Հետեւավար, անոնք չգիտցան առողջ դատողութեամվ իրականութիւնը զանազանել:*

*Տեսայ մարդիկ, որոնց տեսողութեան իջած է գիշերային քօղ... սակայն, իրենց գիտակցութեան վրայ ծագած է գիտութեան արեւը: Սորվեցայ, որ որքան ալ մութ ըլլայ գիշերը... գիտութեան արեւը աւելի զօրաւոր է:*

*Տեսայ մարդիկ, որոնց զգացումները ժամացոյցի սլաքներուն հետ մեծցած, երիտասարդացած, ծերացած ու մահացած էին, սակայն զանոնք թաղող չէին գտած որովհետեւ չէին գտած գիր ենք հասկցող մը:*

*Տեսայ մարդիկ երէկ... այսօր... վաղը... միւս օր... եւ ամէն օր... սակայն չեմ գիտեր եթէ իսկապէս տեսայ զիրենք, որովհետեւ մէջս ոչ մէկ ազդեցութիւն թողեցին:*

*Տեսայ մարդիկ, որոնց փայփայած էր անկեղծութեան զեփիւռը, սակայն առաջին փոթորիկին ընթացքին, սուտի ու դաւաճանութեան մրրիկը առաւ զիրենք... զեփիւռները գացին եւ փոթորիկը շարունակուեցաւ:*

*Տեսայ մարդիկ, որոնց սրտին դուռերը փակուած են եւ միայն մէկ պատուհան վաց մնացած է, սակայն չեմ գիտեր ինչ է այս պատուհանին օգուտը որովհետեւ կտրուած է եւ կը վիրաւորէ վոլոր անոնց՝ որոնք կը փորձեն անոնց սրտէն ներս մտնել:*

*Տեսայ մարդիկ, որոնց յոգնեցուցած ու փճացուցած է հաւատարմութիւնը: Հետս քալեցին երկար ճամվու վրայով, սակայն առաջին փոսին քայքայուեցան եւ հրաժեշտ տալով ետ դարձան:*

*Տեսայ մարդիկ, որոնց սրտի սերմերը գիտութեան վերքեր տուին եւ անոնց հոգիները լուսաւորուեցան իմաստութեան մոմերով, սակայն*

*Շար.ը էջ 17*

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԱԽՈՒՄԲ
Ղեկավարութեամբ՝ Հայրենի արուեստագէտ պարուսոյց
ՏԻԿԻՆ ԱՐԵՒԻԿ ՅԱԿՈԲԵԱՆԻ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
ARMENIAN DANCE ENSEMBLE
Dance instructor and artist: MRS. AREVIK HAKOPYAN

FOR ALL AGES 5 & UP
5 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՍԿՍԵԱԼ
626.398.0506
626.710.0317
REGISTRATION STARTS JUNE 4TH
Tuesdays 5:00 - 6:00pm
Thursdays 5:00 - 6:00pm
Fridays 7:00 - 8:00pm
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԻՍ 4-ԷՆ ՍԿՍԵԱԼ
Երեքշաբթի օրերը ժամը 5:00-6:00
Հինգշաբթի օրերը ժամը 5:00-6:00
Ուրբաթ օրերը ժամը 7:00-8:00



CLASSES BEGIN JUNE 14
MONDAYS *and* THURSDAYS • 5:00-6:00
Պարի փորձերը ԵՐԿՈՒՇԱԲԹԻ *եւ* ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՅՈՒՆԻՍ 14-ԷՆ ՍԿՍԵԱԼ երեկոյեան ժամը 5:00-6:00
Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104

## ԱՅՍ ՏԱՐԻ ԵՒՍ ՊԷՏՔ Է ՕԳՆԵՆՔ

*Շարունակուած էջ 14-էն*

*monia) կը տառապի, մեր տան մօտ գտնուող հիւանդանոցը փոխադրած են իրեն որպէսզի այլեւս իմ պատասխանատուութեան տակ ըլլայ ան: Յուզուած ու շուարած վիճակի մէջ էի, յանկարծ դուք հեռաձայնեցիք:*

*Այս օգնութեան գումարով տղուս հիւանդանոցի անկողնին համար սաւան, բարձ եւ երես, ինչպէս նաեւ հագուելիք մի քանի փոխնորդ պէտք է գնեմ:*

*Այո, սիրելիներ, այսպէս է Հայաստանի գինուորի ծնողքին վիճակը: Երբոր գինուոր մը հիւանդանայ, անոր ծնողքին պարտականութիւնը կ'ըլլայ զայն խնամելը: Իսկ տեղական-ժողովրդական հիւանդանոցները, որոնցմէ մէկուն մէջ եղած եմ, ոչ թէ միայն, ինչպէս երաժշտուհին ըսաւ սաւան եւայլն, այլ հիւանդին ջուրն ու ուտելիքը եւս տնեցիները պէտք է հայթայթեն:*

*Հետեւաբար, ինչպէս անցեալ տարուան յօդուածիս մէջ ըսած էի հոս եւս կ'ուզեմ կրկնել որ էր. «Ձեր կատարած նիւթական օգնութիւնը օրհնանքի վերածուած կը վերադարձուի ձեզի»:*

*Օգնութեան հասնողի մը համար ասկէ աւելի մեծ հոգեկան վարձատրութիւն եւ գոհունակութիւն չի կրնար ըլլալ:*

*Բոլորիս ծանօթ եւ բոլորիս երախտագիտութեան արժանի մեծ գիտնական, որուն համեստութիւնը յարգած ըլլալու համար, առանց անունը տալու պիտի ըսեմ թէ՝ այս ազնիւ հայորդին՝ դոկտոր եւ փրոֆէսոր մըն է, որ օգնութեան իր check-ը ղրկեց 20րդ դարու մեծ աշուղ, Գուսան Աշոտի աղջկան օգնելու նպատակով, քանի որ Գուսան Աշոտի թոռան վաղահաս մահով հարսին ու ծոռներուն հոգատարութիւնը ինկած էր Գուսան Աշոտի խեղճ աղջկան վրայ: Իր եւ հարսին վատ եկամուտովը կը ջանային ապրիլ:*

*Անցեալ տարի, երբ հեռաձայնեցի Գուսան Աշոտի աղջկան, ժամադրուելու եւ յանձնելու համար փրոֆէսորին սրտաբուխ օգնութեան գումարը, դժբախտաբար, հարսէն իմացայ որ, չորս ամիս առաջ հէգ կինը հիւանդութենէն մահացեր էր: Այդու ամենայնիւ ժամադրութիւնը կարգադրեցի, գումարը յանձնեցի եւ յուզումս զսպելով խոստացայ իրեն շարունակել այդ օգնութիւնը:*

*Այս ազնիւ հայորդին, փրոֆէսորը կ'ըսէր. «Պրն. Փիտէճեան, կը գնահատեմ ձեր նուիրուածութիւնը եւ կը խնդրեմ որ, փոխանցէք փոքրիկ նուէրը մեր թանկագին անշուշտ՝ Աշոտի...»:*

*Ինծի համար այս տողերուն մէջէն ամենաթանկագին բառը «թանկագին» բառն էր: Որովհետեւ փրոֆէսորը այդ մէկ բառով կ'արտայայտէր աշուղի հարուստ արուեստին կատարած ներգործութիւնը հայու հոգիին վրայ ու ինք, որպէս այդպիսիներէն մին, իր երախտագիտութիւնը կ'արտայայտէր աշուղ Աշոտի ընտանիքին հանդէպ: Ինչո՞ւ ամէն հայ այսպէս չմտածէ:*

*Պարագայ մը եւս յիշեմ եւ վերջացնեմ խնդրագիրս:*

*Ձեր օգնութիւնը կ'երթայ նաեւ Կոմիտասի Անուան Պետական Երաժշտանոց յաճախող չորս ծնողազուրկ, բոլորովին որբ ուսանողուհիներուն:*

*Սիրելի ընթերցողներ, այս տարի չորրորդ տարին ըլլալով, նոյն առաքելութեամբ տիկնոջս հետ Սեպտեմբերի ճիշդ սկիզբը պիտի երթանք Հայրենիք:*

*Այս տարի եւս, ինչպէս նախորդներուն, կու գամ հրապարակաւ յայտնել իմ խորին շնորհակալութիւնները այն թերթին խմբագրութեանը, որ նկատի առնելով այս ձեռնարկին օգտակարութիւնը, իր սուղ սիւնակներուն մէջ տեղ տալով կը հրատարակէ զայն:*

*Այսու, կու գամ խնդրել բոլորիս ազնիւ օգնութիւնը հայրենի մեր կարիքաւոր երաժիշտ-երաժշտագէտներուն համար:*

*Այստեղ կ'ուզեմ իմացնել նաեւ որ, իւրաքանչիւր օգնութիւն ստացողէ, օրուան թուականով եւ ստորագրութիւնով գումարը յիշուած, շնորհակալական ստացագիր մը կ'առնեմ, որպէսզի վերադարձիս ուղարկեմ զայն նուիրատուին որպէս շնորհակալագիր ու անդորրագիր:*

*Կը վերջացնեմ գրութիւնս սա Աւետարանական պատգամով.*

*«Այն որ աղքատին կու տայ, Աստուծոյ տուած կ'ըլլայ»:*

*Ձեր բոլոր իղձերու իրականացման սրտագին մաղթանքներ:*

*Ձեր օգնութեան check-երը կրնաք ղրկել հացէիս.*

Krikor Pidejian
72 Pilgrim Avenue
Yonkers, Ny>y 10710

*Աւելի մանրամասնութեանց համար,*

*հեռախօսի թիւս՝ (914) 793-0913 է:*

## ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ԾԱՌԸ

*Շարունակուած էջ 14-էն*

*տեսայ ու լսեցի Իրանի Իսլամական Հանրապետութեան բարձրաստիճան ղեկավարների կարծիքը, հաւատը Լեւոն Ահարոնեանի մասին: Այս այցի ընթացքում աւելի ջերմացան մեր կապերը, որի արդիւնքում անցեալ տարի Հայ-Իրանական բարեկամութեան միութեան անունից նա մեր հանրապետութեանն ուղարկեց ընկուզենու եւ պիստակենու տնկանիւթ, որը տեղակայեցինք տարբեր մարզերում, _ասում է ՀՀ Գիւղատնտեսութեան նախարարութեան փոխնախարար Սամուէլ Գալստեանը, ում անմիջական մասնակցութեամբ էր, որ Մայիսի 17-ին Իրան-Հայաստան բարեկամութեան միութեան կողմից ուղարկուած շուրջ 2200 տնկիները տեղակայուեցին Հայաստանի որոշ մարզերում եւ Արցախում:*

*Ընդհանուր քանակով 700 ընկուզենու, 500 պիստակենու, 500 նշենու, 500 ձիթենու տնկանիւթի տեղաբախշումը կատարուել է ՀՀ Գիւղնախարարարութեան միջնորդութեամբ: Պտղատու ծառերի որոշ տեսակներ, օրինակ ձիթենին Հայաստանում ունի իր տեղակայման վայրը, որտեղ բնակլիմայական պայմանները նպաստաւոր են նրա մշակման համար: Ըստ պարոն Գալստեանի ձիթենու մշակում Նոյեմբերեանի շրջանում եղել է 30 տարի առաջ եւ այսօր անցեալի աւանդոյթը չխախտելով, յենուելով ագրարային ուսումնասիրութիւնների փորձի վրայ Իրանից առաքուած ձիթենու տընկանիւթը, 30 ընկուզենու, 36 նշենու հետ միասին ուղարկուել է Նոյեմբերեանի տարածաշրջան Հայ Անտառ ՊՈԱԿ- ի ենթակայութեան տակ գտնուող տարածքում տեղակայուելու:*

*Շուրջ 310 տնկի էր յատկացուել Արցախին, փոխադրամիջոցի տարողունակութեան սահմանափակ լինելու պատճառով փոխնախարարի հաւաստիացմամբ տնկիների առաքումը Արցախ կրկնուելու էր:*

*_Տնկիներ են յատկացուել նաեւ դպրոցների եւ անհատների, համայնքների, ինչպէս նաեւ որոշ քանակութեամբ ծառեր են տնկուել Իրան-Հայաստան բարեկամութեան այգում, անցեալ տարուայ տընկած ծառերի կողքին մնացած բաց տարածութիւնների վրայ: Իրան-Հայաստան բարեկամութեան միութեան նախագահ պարոն Ահարոնեանի հետ որոշել ենք Հայաստանի Ագրարային համալսարանի, սփիւռքի համապատասխան բուհերի ուսանողների այց - պրակտիկաներ կազմակերպել այս նորաստեղծ այգին, որի մի մասը հիմնել ենք արդէն:*

*Կը տեղադրենք նաեւ այն ցուցանակը, որի վրայ գրուած կը լինի այգու հիմնումը, տնկուած ծառերի քանակը, որը ստեղծուել է հայ-իրանական միջկառավարական յանձնաժողովի, միջպետական կապերի, Հայաստան-Իրան բարեկամութեան միութեան սերտ համագործակցութեան արդիւնքում:*

*Արարատի մարզի Քաղցրաշէն գիւղի դպրոցում, աւարտական վերջին զանգի արարողութիւնն ի պատիւ փոխնախարարի առաջարկի այսուհետ նոր խորհրդով է հարստանալու...*

*_Մեր գիւղի դպրոցը 32 շրջանաւարտ ունեց այս տարի, նրանք 33 կը լինէին, եթէ մի երիտասարդ աղջնակ ժամանակից շուտ չը հեռանար կեանքից... Դպրոցի այգում այս առիթով տնկեցին 32+ 1 33 ընկուզենիներ, որոնց կողքին ամէն տարի շրջանաւարտների ձեռքով կաւելանան նորերը, հպարօրէն նշում էր պարոն Գալըստեանը, ում վրայ մեծ տպաւորութիւն էին թողել իրանահայ համայնքի ջերմ վերաբերմունքը, «Արարատ» կազմակերպութեան ընդունելութիւնը:*

*_Ծառատունկի աւանդոյթը մեզանում ակտիւօրէն զարգանում է, նշենք նաեւ, որ Հայաստանից Չինաստան են ուղարկուել 500 ծիրանենի: Տնկանիւթ ենք ստացել նաեւ Սիրիայից: ԻԻՀ-ից սա երկրորդ բարեգործական առաքումն էր:*

*Խորհրդանշական լինելուց զատ պտղատու ծառատեսակների նոր այգիների հիմնումը Հայաստանում գիւղատնտեսութեան եւ բիզնեսի բնագաւառում լուրջ առաջընթաց կարող է արձանագրել, պէտք է ակտիւօրէն զբաղուել այդ հարցերով, ասում է փոխնախարարը, գիւղի իսկական մշակի նման ամէն մի ծառն ու ճիւղը գուրգուրելով՝ աւելացնում, որ նորատունկ ծառերը նման են երեխայի, խնամք եւ հոգատարութիւն է հարկաւոր, որպէսզի յետագայում տան սպասուած արդիւնքը...*

*Ծառատունկն էլ յիշատակի ու պատմութեան խորհրդանիշ է, աւելացնենք մեր բարեկամութեան ծառերը, որոնք վկայելու են բարի նպատակների մասին:*

*Շարունակենք արքաների աւանդոյթը...*

*«Յոյս»*

## ՏԵՍԱՅ... ԵՒ ՍՈՐՎԵՑԱՅ

*Շարունակուած էջ 16-էն*

*ընկճուածութիւնն ու յուսահատութիւնը փլուզումի ենթարկած են գիրենք:*

*Տեսայ մարդիկ,որոնց իսկական մետաղը սէր եւ գուրգուրանք է... սակայն անոնք ժամանակի ընթացքին սէրը սպաննած են մոռացութեան դանակով: Ու հիմա անոնք գերի վռնուած են դժանութեան վանակին կողմէ եւ անոնց ծովափներուն վրայ հանգչած են ոխակալութեան նաւերը:*

*Տեսայ մարդիկ, որոնց վերնագիրը սէրն է, ապաստանը՝ գուրգուրանքն է: Սորվեցայ, որ գոյութիւն ունին մարդիկ, որոնք կը կրեն կանաչ արտերու եւ կապոյտ երկնքի յատկութիւնները:*

***

*- Կեանքը սորվեցուց վարդ մը ցանել աշնան, ձմրան ըլլալ անոր վերարկուն, ամրան ըլլալ անոր անձրեւը, իսկ գարնան ըլլալ անոր զեփիւռը:*

*- Կեանքը սորվեցուց հրաժեշտ տուած ժամանակ ներողութիւն, որովհետեւ թերեւս այդ հրաժեշտէն ետք այլ հանդիպում չըլլայ:*

*- Կեանքը սորվեցուց պայքարիլ Վոլոր անոնց դէմ, որոնք դէմ կը կենան արժանապատուութեանս եւ զգացումներուս:*

*- Կեանքը սորվեցուց սիրտս նուիրել ոչ թէ այն անձին որուն կը սիրեմ, այլ այն անձին որ ինծի կը սիրէ:*

*- Կեանքը սորվեցուց աւելի գործել եւ քիչ խօսիլ:*


# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ----------------------------------------**
**Address: --------------------------------------**
**City: --------- State:--------- Zip Code:------**
**Country: ------------**
**Tel :------------------------ Fax : -------------------------**

## ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

*Շարունակուած էջ 1-էն*

ուումը: «Մենք մեր անհանգստութիւնը յայտնեցինք ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Ատրպէյճանի նախագահներուն, որ բռնութիւններուն վերադառնալը անընդունելի է: Մենք կը ցաւինք մի քանի շաբաթ առաջ տեղի ունեցած իրադարձութեան համար», - ըսաւ Քլինթըն:

Քլինթըն յիշեցուց, որ շարք մը լուրջ խորհրդակցութիւններ տեղի ունեցած են Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն միջեւ ու ըսաւ, - «Այժմ մենք յոյսով ենք տեսնելու իրական յառաջընթաց հիմնարար սկզբունքները ամբողջացնելու ուղղութեամբ, ինչ շարունակելու աշխատանքը հաշտեցման շուրջ՝ անկախ գոյութիւն ունեցող խոչընդոտներէն: Եւ մենք կը յորդորենք Թուրքիային ձեռնարկել քայլերը, որոնք ան խոստացած է ձեռնարկել: Մենք կոչ կ՛ընենք նաեւ երկու կողմերուն՝ ջանքեր գործադրել եւ շարունակել փնտռել յարաբերութիւններու կարգաւորման դուռը բանալու կարելիութիւնները»:

«Բայց Հայաստանի՝ Ապրիլին կայացուցած որոշումը պետական գործչին վայել եւ տպաւորիչ որոշում էր եւ ինչպէս կ՛ըսեն սփորի մէջ՝ գնդակը մրցակցի դաշտն է», - ըսաւ Հիլըրի Քլինթըն:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան, միատեղ ասուլիսի ժամանակ իր հերթին ըսաւ, որ հայ - թրքական յարաբերութիւններու հարցով Հայաստան համամիտ է Միացեալ Նահանգներու հետ, որ պէտք է կարգաւորել յարաբերութիւնները առանց նախապայմաններու եւ յարգել համաձայնութիւնները:



ԱՄՆ պետական քարտուղար Հիլըրի Քլինթըն եւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան մամլոյ ասուլիսի ընթացքին

որ կարելիութիւն կու տայ մշակելու վերջնական խաղաղ կարգաւորումը»:

«Իւրաքանչիւր ոք գիտէ, որ այդ քայլերը դժուար է կատարել, բայց մենք կը հաւատանք, որ անոնք կարեւոր քայլեր են: Նախ եւ առաջ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի, ինչպէս նաեւ Հայաստանի, Ատրպէյճանի ու ամբողջ տարածաշրջանի շահերէն կը բխի, որպէսզի մենք աշխատինք միասին հնարաւոր ջանասիրութեամբ՝ յանգելու այս հակամարտութեան ընդունելի եւ երկարատեւ լուծման», - շեշտեց Հիլըրի Քլինթըն:

Անդրադառնալով հայ-թրքական յարաբերութիւններուն, Տիկին Քլինթըն յայտնեց, թէ Միացեալ Նահանգները կը հաւատայ, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորումը կ՛ամրապնդէ կայունութիւնը, նաեւ բաց սահմանները խթան կը հանդիսանան առեւտուրի ծաւալներու եւ ներդրումներու աւելացման համար:

«Այսուհանդերձ, ինչպէս գիտէք, այս բոլորը իրականութիւն չեն դարձած եւ որոշ խնդիրներ եւ խոչընդոտներ եղան: Բայց ես շատ ուրախ եմ, որ նախագահ Սերժ Սարգսեան յայտարարեց, որ անկախ Թուրքիայէն եկող խնդիրներուն, Հայաստան կը շարունակէ պատրաստ մնալ յարաբերութիւններու կարգաւորման եւ կը կասեցնէ գործընթացը, մինչեւ որ թրքական կողմը պատրաստ ըլլայ առաջ շարժելու», - յայտարարեց Միացեալ Նահանգներու պետական քարտուղարը եւ շարունակեց. - «Մենք կ՛ողջունենք Ձեր նախագահի որոշումը, քանի որ այդ որոշում է

«Մենք պատրաստ կը լինենք շարժուել առաջ, երբ որ Անկարան եւս նորից պատրաստ կը լինի շարժուել առաջ, կարգաւորել յարաբերութիւնները առանց նախապայմանների», - ըսաւ Նալբանդեան:

Նախագահական նստավայրէն ներս տեղի ունեցած ասուլիսէն ետք Հիլըրի Քլինթըն եւ Էդուարդ Նալբանդեան պտտած են Երեւանի փողոցներով: Պետական Քարտուղարը քալելով անցած է Բաղրամեան պողոտան, ապա Հիւսիսային պողոտայով հասած է Հանրապետութեան հրապարակ, ուրկէ ուղեւորուած է «Արմենիա-Մարիոթ» հիւրանոց, ուր ան իջեւանած է կիրակի գիշեր:

Երկուշաբթի, Յուլիս 5-ի առաւօտեան Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Հիլըրի Քլիթըն այցելած է Հայոց Ցեղասպանութեան զոհերու Ծիծեռնակաբերդի յուշահամալիրը:

Միացեալ Նահանգներու դեսպանատան տարածած հաղորդագրութեան համաձայն, Պետական Քարտուղարը անձնական այցով եղած է Ծիծեռնակաբերդի յուշահամալիր՝ իր յարգանքի տուրքը մատուցելու 1.5 միլիոն հայերուն, որոնք իրենց կեանքը կորսնցուցին 1915 թուականին:

massisweekly.com
Updated every Friday

## ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

*Շարունակուած էջ 1-էն*

ժողովուրդներու իրաւահաւասարութեան եւ ինքնորոշման իրաւունքի հիման վրայ»:

Այդ առնչութեամբ միջնորդները յառաջընթաց արձանագրելով կը յայտնեն, թէ կողմերը կ՛ընդունին, որ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսայի նախագահներու կողմէ 2009 թուականի Յուլիս 10-ին Ակվիլայի մէջ հրապարակուած յայտարարութեամբ ամրագրուած եւ այս տարուայ Յունիս 26-ի համատեղ յայտարարութեամբ վերահաստատուած սկզբունքները պէտք է հիմք հանդիսանան Ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման համար:

Համանախագահները կը յիշեցնեն, որ Պարաք Օպաման, Տմիդրի Մեդվեդեւը եւ Նիկոլա Սարկոզին Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահներուն կոչ ըրած են՝ կատարել յաջորդ քայլը եւ աւարտել աշխատանքը Ղարաբաղեան հարցի լուծման հիմնարար սկզբունքներու վրայ, ինչ որ կարելիութիւն կը ստեղծէ անցնելու խաղաղութեան համաձայնագրի նախապատրաստման:

Համանախագահները նաեւ կողմերուն կոչ ըրած են զինուած ուժերու շփման գծի վրայ խստօրէն հետեւիլ 1994 թուականի զինադադարի համաձայնագրի պահանջներուն:

Յունիս 19-ի միջադէպը անոնք որակած են որպէս զինադադարի ռեժիմի անթոյլատրելի խախտում՝ վերստին ցաւ յայտնելով մարդկային կեանքերու անիմաստ կորուստի համար եւ խստօրէն դատապարտելով ուժի գործադրումը:

Այցի ընթացքին համանախագահները նաեւ կողմերուն ներկայացուցած են աշնան դէպի «գրաւեալ տարածքներ» առաքելութիւն կատարելու իրենց ծրագիրը, որը սկզբունքօրէն ընդունուած է:

## ԹՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԻՋԱՄՏԱԾ ԵՆ

*Շարունակուած էջ 1-էն*

ռը անժամկէտ թափուր մնալու հանգամանքին հետ կապուած:

«Այս պահի նրբութիւնը այն է, որ պատրիարքը ի վիճակի չէ գահակալելու: Հիւանդ է, ինքը չի գիտակցիր, որ պատրիարք է, հիւանդութիւնը մտային է, եւ այդ պատճառով չի կրնար հրաժարական տալ: Այս պայմաններուն տակ պէտք է նոր պատրիարք ունենալ, բայց համայնքը չկարողացաւ կողմնորոշուիլ, ու այդ պատճառով ալ ժողովուրդի միջոցով ընտրութիւն կատարելու տարբերակը մերժուեցաւ ու գտնուեցաւ միջանկեալ լուծում՝ ըսելով, որ երբ պատրիարքը վախճանուի, նոր պատրիարքի ընտրութիւնը աւանդական ձեւով կը կատարուի», - յայտնեց Գոչունեան:

Արա Գոչունեան յայտնեց, որ կարելի չէ մարսել այս պարագան, որ պատրիարքական աթոռը այսքան երկար ժամանակ թափուր մնայ:

Պոլսոյ Հայոց պատրիարքարանը առաջնորդէ զրկուեցաւ, երբ մօտաւորապէս մէկ տարի առաջ ծանր հիւանդանալով 54-ամեայ պատրիարք Մեսրոպ Մութաֆեան կորսնցուց յիշողութիւնը:

## «ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ»Ը

*Շարունակուած էջ 15-էն*

վաւերական պատկերը ներկայացնող հսկայածաւալ այս հատորին, մասնաւորաբար ընդգծելով, որեւէ հրատարակութեան պարագային, հեղինակի նուիրուածութիւնը, մեկենասի պատրաստակամութիւնը եւ ընթերցողի գնահատանքը՝ սփիւռքահայ իրականութեան մէջ:

Հուսկ ապա, նպատակ դարձած ծրագրումի՝ «Յուշամատեան»ի տպագրութեան առիթով, խմբագիրը իր երախտագիտութեան խօսքը փոխանցեց մեկենասներուն՝ Վարդան Թաշճեանին, Յակոբ Տիգրանեանին եւ «Գալայճեան» Հաստատութեան. ի սրտէ շնորհակա-լութիւն յայտնեց Վարուժան արքեպիսկոպոսին եւ Վարդգէս Մահտեսեանին, իրենց օգտաշատ եւ շահեկան աջակցութեան համար, նախապէս մակագրուած մէկական հատոր յանձնելով մեծայարգ ազգայիններուն:

Կոկիկ հիւրասիրութեան սեղաններու շուրջ արտայայտուող կարծիքները, տպաւորութիւնները, քաջալերանքի խօսքերը եւ շնորհաւորութիւնները շարունակուեցան մինչեւ ուշ երեկոյ:

Երանի թէ խունկերամ ըլլար «Իւթիւճեան» սրահը Հաստա-տութեան անցեալով հպարտ, ներկայով եւ ապագայով մտահոգ կիպրաբնակ շրջանաւարտներու եւ սաներու, վաստակաշատ ուսուցիչ-ներու եւ պաշտօնէութեան, վարկ ու յարգանք վայելող ազգայիններու, անձնուէր ուսուցիչներու եւ գրասէր այցելողներու մասնակցութեամբ. չէ՞ որ այդ երեկոյ եզակի Հաստատութ-եան բացառիկ «Յուշամատեան»ի շնորհանդէսզինեձօնն էր, ուր հանրութեան կը ներկայացուէր աննախընթաց եւ մեծածաւալ յուշակոթող մը:

Կիպրահայ

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ԼՈՒՍԻՆ ԽՈՏԱՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ, ՍԴՀԿ Լուիզիանայի «Ժիրայր Մուրատ» մասնաճիւղի վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար տէր եւ տիկ. ընկ. Գրիգոր եւ Քաթիա Խոտանեանին ու տէր եւ տիկ. ընկ. Վազգէն եւ Սեդա Խոտանեանին:*

*Առ այդ $250 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ԼՈՒՍԻՆ ԽՈՏԱՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ, տէր եւ տիկ. ընկ. Վազգէն եւ Հայկօ Գալթագճեաններ ցաւակցութիւն կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար տէր եւ տիկ. ընկ. Գրիգոր եւ Քաթիա Խոտանեանին ու տէր եւ տիկ. ընկ. Վազգէն եւ Սեդա Խոտանեանին:*

*Առ այդ $250 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ԼՈՒՍԻՆ ԽՈՏԱՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ, ՍԴՀԿ Կլենտէյլի «Արսէն Կիտուր» մասնաճիւղի վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ Խոտանեան ընտանեկան պարագաներուն ի մասնաւորի տէր եւ տիկ. Պետրոս եւ Լենա Խոտանեաններուն:*

*Առ այդ $100 կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ԿԱՐՕ ԿԱՐՎԱՆԵԱՆԻ մահուան առթիւ տէր եւ տիկ. Թադէոս եւ Նորա Քէօրողլեաններ ցաւակցութիւն կը յայտնեն ընտանեկան պարագաներուն:*

*Առ այդ $100 կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Փոքրիկն ԷՎԸՆ-ԱՐԱ ԷԼՈՒՈՒՏԻ մահուան առթիւ մեծ հայրն ու մեծ մայրը տէր եւ տիկ. ընկ. Պօղոս եւ Ազատուհի Մութաֆեաններ, Լուիզիանայէն եւ Ջէտ եւ Մարալ Էլուուտ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց սուգին, այցելութեամբ, հեռաձայներով, ծաղկեպսակով կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ:*

*Ի մասնաւորի շնորհակալութիւն կը յայտնեն Լուիզիանայի Ս. Կարապետ եկեղեցւոյ հովիւ Տ. Թադէոս Ապտալեանին ու եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամներուն:*

*Առ այդ $300 կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

*Շարունակուած էջ 8-էն*

*Վեր. Յովսէփ Մաթոսեանի օրհնութեան աղօթքով հանդիսութիւնը վերջ գտաւ, որմէ ետք ժողովուրդը ուղղուեցաւ դէպի Կլենտէյլի Փալատիօ ճաշարանը, ուր տեղի ունեցաւ շրջանաւարտներուն ի պատիւ կազմակերպուած ճաշկերոյթխրախճանքը:*

*Ե. կարգի աւարտականներուն պաշտօնական մուտքէն ետք, եկան 8րդի շրջանաւարտները, ոորնցմէ իւրաքանչիւրը բեմ բարձրացաւ ստանալու իր բաժինը, որպէս «լաւագոյն մարզիկ», «ամենէն համեստ», «երաժշտասէր», կամ «ամենէն պատրաստաբան» աշակերտ: Ներկաները մեծ հաճոյքով դիտեցին աշակերտներուն կողմէ պատրաստուած երկու տեսաերիզներ առաջինը իրենց մանկութիւնն ու աշակերտական տարիները պատկերացնող, իսկ երկրորդը իրենց նուիրեալ դասատուներն ու տնօրէնը ներկայցնող, որոնց շնորհակալութիւն յայտնելու համար երգեցին ու արտասանեցին ծնողքի մը կողմէ պատրաստուած կտոր մը: Խանդավառութիւնը տեւեց մինչեւ ուշ գիշեր:*

*Մանկապարտէզի ամավերջի հանդէսը տեղի ունեցաւ Յունիս 18, 2010ին, վարժարանի հանդիսասրահին մէջ, շրջանաւարտները թիւով 23 ներկայացուցին գեղեցիկ գեղարուեստական յայտագիր մը, անոնք արտասանեցին, երգեցին, պարեցին եւ ապա ստացան իրենց առաջին վկայականը:*

*Աչքը լոյս բոլոր ծնողներուն, վարձքը կատար կրթական մշակներուն եւ բարի երթ ու յաջողութիւն բոլոր շրջանաւարտներուն:*


# ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ**
**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**
**CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ**
**(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)**
**GLOABCAST SATELLITE**
**ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00**


## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**
**Norserount@sbcglobal.net**

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

*Շարունակուած էջ 6-էն*

*ու հայկական յարակից տարածքը շինարարական կազմակերպութեանը տրամադրելուն. այն ոչ միայն կը փճացնի Թաղամասի ընդհանուր պատմական եւ ճարտարապետական տեսքը, այլեւ հայկական մէկ ընտանիք անտուն կը դառնայ, քանզի ապրում է եկեղեցու տարածքում:*

*Երուսաղէմի քաղաքապետարանում գործող յատուկ յանձնաժողովը, որն զբաղւում է նման բողոքներով ու հիմնահարցերով, Կորիւն վարդապետ Բաղդասարեանի տեղեկացմամբ, արդէն 6 տարբեր ատեաններից բողոքներ է ստացել, ինչպէս նաեւ առանձին նամակ՝ Հայոց պատրիարքարանից:*

*Թէ ինչ ճանապարհներով էր շինարարական կազմակերպութիւնը ստացել Երուսաղէմի քաղաքապետարանի համաձայնութիւնը՝ յայտնի չէ, սակայն փոխարէնը վստահաբար կարելի է փաստել, որ սա եզակի կոււախնձոր չէ Հայոց պատրիարքարանի ու քաղաքապետարանի միջեւ:*

*Մինչ օրս անյայտ է մնում հայկական գերեզմանատան մօտ գտնուող Սուրբ Փրկիչ կիսակառոյց եկեղեցու ճակատագիրը, աւտոկանգառը տարիներով չի թոյլատրւում նոյնիսկ բարեկարգել, հայ բնակիչները նոյնիսկ մէկ պատուհան սեփական տան մէջ բացելու իրաւունք չունեն, ու դատական գործընթացները կարող են տարիներ տեւել, մինչեւ որոշում կը կայացուի որեւէ խնդրի առնչութեամբ:*

*Օրինակ, Յուլիսի կէսերին յայտնի դարձաւ, որ 4 տարի սպասելուց յետոյ քաղաքապետարանից վերջապէս ստացուել է թոյլտուութիւն Ժառանգաւորաց վարժարանի բակում տեղադրուած՝ Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած խաչքարերի ծրագրի շարունակման՝ հայկական կամարի շինարարական աշխատանքների համար:*

*Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու բակում նախատեսուող շինարարութեան հետ կապուած՝ այժմ ստորագրահաւաք է կազմակերպուել տուեալ Թաղամասի բնակիչների ստեղծած կայքէջում:*

*Հրեական մի շարք լրատուամիջոցներ, այդ թւում՝ Իսրայէլի առաջին ալիքը, անդրադարձել են հայ համայնքի ցոյցին ու հայերի բողոքին:*

## ՅՈՒՆԻՍԵԱՆ ՂՕՂԱՆՋՆԵՐ

*Շարունակուած էջ 8-էն*

*շանները, ինչպէս նաեւ իւրաքանչիւր դասարնից մէկական աշակերտի՝ Դպրոցի տնօրինութեան պատուոգիրը: Տեսնել էր պէտք աշակերտների յուզումն ու խինդով լեցուն հայեացքները:*

*Դպրոցի տնօրէնութիւնը շնորհաւորեց ե՛ւ իր սաներին, ե՛ւ ծնողներին հանդիսութեան, աւարտական վկայականները ստանալու առթիւ, կարեւորեց աշակերտների կողմից ցուցաբերած պատասխանատուութիւնն ու աշխատասիրութիւնը, մաղթեց նրանց քաջառողջութիւն, պայծառ ու լուսաւոր ապագայ, բազում յաջողութիւններ ուսումնառութիւնը շարունակելու գործում, միաժամանակ նշելով, որ դպրոցի դռները միշտ բաց կը լինեն իր սաների առջեւ:*

*Յուզուած էին նաեւ ծնողները: Հանդիսութեան աւարտին նրանք շնորհակալութեան եւ երախտագիտութեան ջերմ խօսքեր ուղղեցին տնօրէնութեանն ու ուսուցչական կազմին, դպրոցին մաղթեցին բարգաւաճում եւ յառատեւում:*

*Նրանցից շատերը խոստովանեցին՝ որ իրենք մտովի տեղափոխուեցին իրենց մանկութեան աշխարհը, վերապրեցին ջերմ ու նուիրական այդ պահերը, որոնք արդէն դարձել են անմոռաց ու թանկագին յուշեր...*

*Հանդիսութիւնն արդէն աւարտուել էր, սակայնյ աշակերտները դեռ կանգնած էին իրենց տեղերում, կարծես չէին ուզում հեռանալ իրենց համար երկրորդ տուն դարձած, սիրելի ու հարազատ առաջին կրթօճախի՝ «Փոքրիկ Հրեշտակներ»ի ջերմ ու տաք գրկից...*

*Բարի երթ սիրելի սաներ...*
*Աստուած ձեզ պահապան...*


**REQUEST FOR PROPOSALS**
**(RFP# 7533)**
**PROPERTY MANAGEMENT SERVICES**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from property management companies to perform the management and operation of its Asset Management Portfolio consisting of up to 67 multi-family and senior market rate and multi-family, senior and income-restricted scattered properties which include up to 1,106 units. Copies of the RFP may be obtained beginning June 21, 2010 online at www.hacla.org/ps Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057. until 2:00 P.M., July 16, 2010.**

7/1, 7/8/10
CNS-1885316#
MASSIS WEEKLY

**REQUEST FOR PROPOSALS**
**(RFP #7534)**
**2010 CONTINUUM OF CARE HOMELESS ASSISTANCE PROGRAMS**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified organizations interested in providing supportive services with assisted housing through the Section 8 Continuum of Care Homeless Assistance Programs. A copy of the RFP may be obtained beginning June 28, 2010 via http:// www.hacla.org/ps/ or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd, #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., by July 27, 2010 - Deadline may be subject to change.**

7/8, 7/15/10
CNS-1891308#
MASSIS WEEKLY

## ՊԱՍՔԷԹՊՈԼ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆՑԱՒ ԵՒՐՈՊԱՅԻ B ԴԻՎԻԶԻՈՆ



Թէեւ շաբաթ ՖԻԲԱ-ի կանանց պասքեթպոլի C դիվիզիոնի մրցաշարում Հայաստանի ընտրանին պարտութիւն կրեց (74:65) Մալթայի հաւաքականից, Նրան յաջողուեց անցնել եւրոպական պասքէթպոլի աւելի բարձր դիվիզիոն:

Անցեալ տարի յայտնի «Հատիսէ պասքէթպոլային ակումբի վերակենդանացումից յետոյ այս մրցաշարը Հայաստանի համար երկրորդ լուրջ փորձութիւնն էր, որը հաւաքականը յաջողութեամբ յաղթահարեց՝ անցնելով B դիվիզիոն, որտեղ Հայաստանի ընտրանուն, ինչպէս ենթադրւում է, աւելի լուրջ մրցակցութիւն է սպասւում: (ՖԻԲԱ-ն բաղկացած է երեք դիվիզիոնից, որոնցից A-ն ամենաբարձրն է:)

2011 թ. գարնանը մեկնարկող մրցաշրջանում՝ B դիվիզիոնում, Հայաստանի ընտրանին կը խաղայ մօտ երկու տասնեակ երկրների ներկայացուցիչների հետ:

Շաբաթ Երեւանում անցկացուած մրցաշարի (որին ութ հաւաքական էր մասնակցում) վերջին խաղից առաջ Հայաստանի ընտրանին 4 փայլուն խաղ էր անցկացրել՝ յաղթանակ տանելով բոլոր խաղերում: Նախքան C դիվիզիոնի ախոյեան Մալթայի հետ հանդիպելը Հայաստանի ներկայացուցիչները բոլոր խաղերում երկնիշ թուով են առաւելութեան հասել մրցակիցների նկատմամբ:

Հայաստանի հաւաքականը արդէն խաղակէսին յայտնուել էր ծանր կացութեան մէջ եւ մրցակցից հետ էր մնում 36:23 հաշուով, սակայն Գիա Ղազանչեանի սաները հաշուի մէջ տարբերութիւնը հասցրեցին մէկ միաւորի: Խաղաւարտից գրեթէ չորս րոպէ առաջ Մալթայի ներկայացուցիչները Հայաստանի ընտրանուց առաջ էին ընդամէնը 3 միաւորով (62:59), սակայն Մալթայի հաւաքականը հանդիպման վերջնամասում թոյլ չտուեց տանտէրերին նուազեցնել 5 միաւորի տարբերութիւնը:

«Միկա» մարզահամալիրում հաւաքուել էին 1900 մարզասէր՝ այդ կերպ, խաղը դիտելու առումով, ռեկորդ սահմանելով ՖԻԲԱ-ի քիչ ժողովրդականութիւն վայելող դիվիզիոնի մրցաշարի համար:

Հայաստանի ընտրանու եւ մարզասէրների համար ուրախալի էր ազգային հաւաքականում ընդգրկուած երեք ամերիկացիներից Քրիստինէ Քեփենեկեանի (ծնուել է Երեւանում) յաջողութիւնը, որը ճանաչուել է մրցաշարի ամենաարդիւնաւէտ խաղացողը:

## ՓՈՒԹՊՈԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Յուլիս 10 Շաբաթ ժամը 11:30
Ուրուկուէյ-Գերմանիա

Յուլիս 11 Կիռակի ժամը 11:30
Հոլանտա-Սպանիա

## ՋԵՐՄՈՒԿ-2010 GRAND PRIX FIDE ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉԵԱՆԸ ԵՐՐՈՐԴ

Ջերմուկում աւարտուեց կանանց Grand Prix FIDE 4-րդ մրցաշարը: Վերջին տուրում միանձնեայ առաջատար Նանա Ձագնիձէն ոչ ոքի խաղաց Հոու Ցիֆանի հետ եւ 9 միաւորով ապահովեց առաջին տեղը: Գլխաւոր հետապնդող Տատիանա Կոսինցեւան էլ պարտուեց Էլինա Դանիէլեանին, սակայն պահպանեց երկրորդ տեղը: Լիլիթ Մկրտչեանը միաւորը կիսեց Բաիրա Կովանովայի հետ:



1. Ձագնիձէ 9
2. Կոսինցեւա 7.5
3. Մկրտչեան 6.5
4. Դանիելյան 6.5
5. Ստեֆանովա 6.5
6. Հոու Ցիֆան 6
7. Շեն Ցան 5.5
8. Կրամլինգ 5.5
9. Ջիբուրդանիձե 4.5
10. Սյու Ցուհուա 4
11. Կովանովա 3
12. Ֆիերօ 1.5

## ՅՈՒՆԱՀՌՈՎՄԵԱԿԱՆ ՈՃԻ ԸՄԲԻՇՆԵՐԸ ՆՈՒԱՃԵՑԻՆ ՄԵՏԱԼՆԵՐ

Բուլղարիայի Սամոկով քաղաքում Յուլիսի 4-ին աւարտած յունահռոմեական ըմբշամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութեան համեմատաբար յաջող մրցելոյթ ունեցան Հայաստանի յունահռոմեական ոճի ըմբիշները:

66 կգ քաշային կարգում Գեւորգ Սահակյանը գօտեմարտեց բրոնզե մեդալի համար եւ 3:0 հաշվով առաւելութեան հասավ խորվաթ Դոմինիկ Էթլինգերի նկատմամբ:

Իսկ 84 կգ քաշային կարգում եզրափակիչում Արթուր Ալեքսանյանը համառ պայքարում, ընդամենը մեկ միավորի տարբերությամբ պարտվեց Թուրքիայի ներկայացուցիչ Ատեմ Ասլանին: Գօտեմարտն աւարտվեց 3:2 հաշվով:

